

Զերմօրէն շնորհաւորում ենք Հայաստանի եւ Արցախի անկախութեան 11-րդ փարեղարձը

Հայոց Արցախը

Սեպտեմբերի 2-ին Յայ ժողովուրդը տօնեց ԼՂԴ պետական անկախութեան հոչակման 11-րդ տարեդարձը:

1991-ի նոյն այդ օրը ԼՂԻՄ մարզխորհրդի ու Շահումեանի շրջխորհրդի համատեղ նիստում ընդունած պատմական որոշումը ժամանակի պարտադրանքն էր: Դրանից ընդամենը 3 օր առաջ Աղրբեջանի խորհրդարանի՝ անկախութեան մասին հռչակագիր ընդունելուց յետոյ, բախտի քնահաճոյրին թողնած արցախահայութեան ուրիշ բան չէր մնում անել, քան ինքնուրոյն որոշել իր հետագայ ճակատագիրը:

Անշուշտ, այդ համարձակ քայլը, նախադեպը չունենալով նախկին ԽՄՎ ինքնավար կազմավորումների մէջ, մտահոգութիւն էր առաջացրել ոչ միայն Աղրբեջանում: Վիճարկելիութեամբ հանդերձ, ԼՂԴ-ի կազմաւորման իրաւական հիմքը լուրջ կուտան էր դարաբարցիների համար: Այդ էր պատճառը, որ Աղրբեջանի այն ժամանակուայ նախագահ Այզաq Մութավիրովը, սոյս քաղաքական փաստի հանդէպ ծանրակշիր հակափաստարկներ չունենալով, ստիպւած եղավ դիմել «Եղբայրական» միւս երկու հանրապետությունների՝ Ուսւաստանի ու Ղազախստանի օգնութեանը: Սեպտեմբերի 21-22-ը նախագահներ Բորիս Ելցինի ու Նուրսուլթան Նազարբաևի Ստեփանակերտ ժամանելը, թերեւս, հենց դրանով է բացատրում: Ըստ երեքան, Վերոյիշեալ այցը դարաբար եան իհմնախնդրի միջազգայնացն առաջին քայլն էր, որովհետեւ թէ Ուսւաստանը եւ թէ Ղազախստանը աւելի վաղ յայտարարել էին իրենց ինքնիշխանութեան մասին:

Ստեփանակերտի եւ միջնորդների սպասաւած գրոյցը չստացեց: Խռովելով այն բանից, որ նախկին մարզգործկոմի շենքի վրայ փողփողում է Յայաստանի պետական դրոշը, Ա. Մութավիրովը չցանկացաւ մասնակցել այդտեղ կայացած՝ ոչ ԼՂԴ ղեկավարութեան, ոչ էլ հասարակութեան ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

Փոխադարձ համաձայնութեամբ, բանակցութիւնները տեղափոխւցին չեզօք վայր: Սեպտեմբերի 27-ին Յիւսիսային Կովկասի մելեզնովով քաղաքում տեղի ունեցած բազմակողմ հանդիպումը եւս արդիւնք չտուց, որովհետեւ Ղարաբաղի բարձրագոյն մարմնի որոշումը բխում էր բուռ ժողովրդի շահերից, եւ նորաստեղծ ԼՂԴ-ի ղեկավարութիւնը, ի դէմս հանրապետութեան առաջին ղեկավար Լեռնարդ Պետրոսեանի, չեր կարող նահանջել հարազատ ժողովրդի պահանջախնդրութիւնից:

Քաղաքական ըմբռումները դարաբարեան իհմնախնդրի հարցում պաշտօնական Բարձի ու Ստեփանակերտի միջեւ վերջնականօրէն տարանջատուեցին: Եւ դա արդեն պատերազմական գործողութիւնների նախաբայլը հանդիսացաւ. սեպտեմբերի 27-ին Ստեփանակերտի վրայ պայթեցին Շուշից արձակւած «Ալազան» տեսակի առաջին իրիոնները: Նոյն օրը Աղրամի կողմից «ալազաններով» հրթիռակոծւց նաեւ Ասկերան աւանը: Պաշարւած, կրակէ օղակում յայտնւած Արցախը բռունցքը ու դէմս հանդիման կանգնեց իրեն կուլ տալու պատրաստ հրէշին:

Եղաւ ծանր ու տեւական գոտեմարտ հանուն գոյութեան: Պատերազմից գրեթէ ամբողջութեամբ աւերտէց հանրապետութեան տնտեսութիւնը, իրի մատնեցին 100-ից աւելի բնակավայրեր, ավերտէց նաեւ հանրապետութեան բնակչութիւնը շուրջ կէսը:

1994 թ. մայիսի 12-ի հրադադարը իւրօրինակ յաղթանակ էր՝ փոքրիկ Լեռնային Ղարաբաղի Յանրապետութիւնը, թէկուզ մեծ զոհերի գնով, կարողացաւ կենաց ու մահու պայքարում պահպանել իր գոյութիւնը եւ աշխարհին պապացուցել ապրելու իր նաճուն իրաւունքը:

Յրադադարից հետո, ստեղծած ռազմաքաղաքական իրավիճակում, ԼՂԴ-ն ծեռնամուխ եղաւ աւերտած տնտեսութեան վերականգնմանը: Այս բնագաւառում, անշուշտ, անցուց, անցած 8 տարիները հրաշքներ չեն արձանագրել, սակայն ակնյայտ է մի բան՝ իրականացող բարեփոխումները միակ ճիշտ ուղին են հանրապետութեան կենսական ռիթմը նորմալ շնչառութեան բերելու համար: Յանաչափ, վստահ շնչառութիւն ձեռք բերած Արցախն, անկասկած, մեծ վազքատարածութիւն ունի:

Առաւել շնչափելի հանրանկախ հանրապետութիւնում տեղի ունեցող այսօրւայ ժողովրդավարական գործներացներն են, որոնց աստիճանաբար ճանաչումն, Աղրբեջանում կատարվող քաղաքական ոչ աղրբեջանանպաստ իրողութիւնների գուգադրմամբ (որու ամենավայր արտահայտութիւնը 2002 թ. սեպտեմբերեան հանրաբետն է) առելի ըմբռնելի է դարձնում արցախահայութեան պահանջախնդրութեան իրաւական ու քաղաքական իմաստը:

Մի անվիճելի փաստ. 1991-ի սեպտեմբերի 2-ին մեզանից ոչ մէկը չեր կարող կանխագուշակել, որ 11 տարի յետոյ նորաստեղծ ԼՂԴ-ն ոչ միայն տարածաշրջանում կրառնայ ռազմական կարեւոր գործոն, այլեւ ժողովրդավարական ընտրութիւններով ուսանելի օրինակ կիանդիխանայ տարածաշրջանի շատ երկրների համար: Ասել է թէ՝ ընտրուած ուղին անբեկ է, եւ հազի թէ կասկածահարոյց է այն ակնկալումը, որ դարձեալ տարիներ յետոյ անկախութեան նոր գումարելիները կյաւելւեն այսօրւայ ծեռբերումներին՝ մաքառող ժողովրդին ի վերջոյ հասցնելով իր մշտարբուն երազանքի իրականացմանը:

Կ. ԳԱՐԻԲԵԼԵԱՆ

ԱՐՅՎՆՑ ՄՆՅԱՅՆ

«Ուստում եւ Սոհրաբ» օպերան բեմադրեց հայ անւանի կոմպոզիտորի դեկավարութեամբ

Սոյն բարեկանութեամբ օգոստոսի 22-ից «Միլար» սրահում, որը գտնուում է Թեհրանի միջազգային ցուցահանդէսների մնայուն վայրում բեմադրեց «Ուստում եւ Սոհրաբ» օպերան, որի խմբավարն էր հայ հանրայայտ դիրիժոր Լորիս Շահնաւորեանը:

Բեմադրութիւնը ընթացաւ շատ յաջող, մի քանի հիմնական պատճառներով: Նախ եւ առաջ խումըն դեկավարում էր Լ. Շահնաւորեանը, որը ծնունդով իրանահայ է, եւ թեման հարազատ էր նրան, եւտեւարար դա դարձաւ յաջողութեան հիմնական պատճառը, եւ յետոյ այն որ ներկայացող խմբի անդամներն ընտրել էր ինքը՝ Լ. Շահնաւորեանը:

Պարսկերն լեզուվ իրատարակող բազմարի թերթեր մեծ հիմնանունով զնահատեցին այդ ելոյթը:

Հայաստանում նպաստաւոր պայմաններ գոյութիւն ունեն Իրանի հետ առևտրական յարաբերութիւնները ընդլայնելու համար:

Վերջերս Իրանի լրագրողների հետ հանդիպում ունեցաւ «Իրան-Հայաստան առևտրական պալատի» նախագահ եւ իրանահայ ազգային-հասարակական գործիչ՝ պր. Լենն Շահրունեանը:

Պալատի նախագահը յայտնելով վերոյիշեալ տեսակետը, տեղեկութիւններ տուց Իրան-Հայաստան տնտեսական յարաբերութիւնների զարգացման մասին: Նա տեղեկացրեց, որ ըստ Հայաստանի կառավարութեան որոշման՝ Հայաստանում համատեղ ներդրումներ կատարող իրանական ընկերութիւնները մինչեւ 15 տարի գերծ կը լինեն հարկեր վճարելուց:

Պր. Շահրունեանը մի այլ բաժնում ասաց, որ մինչ այժմ Իրանը Հայաստանում կազմակերպել է 8 ցուցահանդէս, որոնցից 6-ը նախաձեռնել եւ կազմակերպել է իր նախագահած պալատը: Նա տեղեկացրեց, որ 6-րդ ցուցահանդէսը իր տեսակի մէջ եզակի է լինելու, քանի որ այնտեղ ցուցադրուելու են շինարարական սարքաւումներ:

Վերջում պր. Շահրունեանը համբերատարութեամբ պատասխանեց լրագրողների հարցերին:

Սոյն հանդիպման մասմակցել էն Իրան հանրածանօթ թերթից մեծ թուղթ լրագրողներ:

Կատարեց Աստրապատականի Հայոց Թեմի Առաջնորդական Ընտրութիւնը

Ի հետեւումն Աստրապատականի հայոց թեմի Պատգամատրական ժողովի խնդրագրի՝ Մեծի Տանն Կիլիկիոյ զահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա կարողիկոսը իր պաշտօնական իրամանագրով (թի 234/02, 24 յուլիս 2002 թ.) արտօնել է Աստրապատականի հայոց թեմում կատարել առաջնորդական ընտրութիւն, ուղարկելով Կիլիկիոյ կարողիկոսութեան միաբաններից բաղկացած ընտրեիների եռանուն ցանկ:

Այնուհետեւ թեմի Պատգամատրական ժողովը իր ուրբար, 9 օգոստոս 2002 թ.-ի արտակարգ նիստում, նախազահութեամբ առաջնորդական տեղապահ Գերապ. Հայր Նշան ծ. վարդապետ Թոփուզեանի, մասնակցութեամբ Պատգամատրական ժողովի 15 պատգամատրների եւ ի ներկայութեան մեջմական խորհրդի, եռանուն ցանկից փակ բէկարկութեամբ եւ միաձայնութեամբ առաջնորդ է ընտրել Գերապ. Հայր Նշան ծայրագոյն վարդապետ Թոփուզեանին:

Այս իմաստով, Պատգամատրական ժողովը նոյն օրը ընտրութեան արդինքը զեկուցել է Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը, շարար, 10 օգոստոս 2002 թ.-ին, իր 270/02 պաշտօնական նամակով վաւերացրել է ընտրութեան արդինքը եւ իր լաւագոյն բարենարդութիւնները յայտնել նորընտիր առաջնորդ Հայր Սուրբին, թեմի ազգային իշխանութեան եւ ժողովրդին:

Կախճանւեց Իրանահայ Անւանի Ծովանկարիչ Յարութիւն Մինասեանը

Իրանահայ անւանի գեղանկարիչ, ծովանկարիչ, մտաւորական Յարութիւն Մինասեանը իր մահկանացուն կնքեց երկուշարքի, յուլիսի 29-ին՝ Թեհրանի իր բնակարանում:



Աջից՝ Յ. Մինասեան, Հով. Էղգարեան, Էդ. Գերմանիկ

Ծնել էր Ուշտում 1910 բարեկանին: 1930-1952 թթ. մասնակցել է Թեհրանում կայացած բազմարի ցուցահանդէսների: 1958 թ. մասնակցել է Վենետիկի միջազգային ցուցահանդէսին եւ 1964-ին Թեհրանում կազմակերպած Ծերսապիրի ծննդեան 400 ամեակին նիդրած ցուցահանդէսին:

Ունեցել է բազմարի անհատական ցուցահանդէսներ՝ Իրանում, Հայաստանում, Միջին Արեւելքում, Եւրոպայում եւ Ամերիկայում:

Մինասեանին կարելի է համարել ծովի մեծ երգիչ Յովհաննես Այազովսկու հետևորդներից մէկը, նրա սկզբնաւորած հայ ծովանկարչութեան դպրոցի «Վերջին մոհկեանը»: Տարիներ առաջ, երբ անդամների մի խումը ներխուժել էր Խորհրդային միութեան դեսպանութեան շենքը Թեհրանում և պատուել այն տեղադրած Այազովսկու պատասխաների խկական օրինակներից մէկը,

Հրապարակություն

դրա վերակառուցման և նորոգութեան գործը միայն վստահից Յ. Մինասեանին: Նրա համբար այնքան բարձր է եղել, որ իր գործունեութեան մասին յօդած է ներառության Ֆրանսիական արդի գեղարվեստական հանրագիտարանում:

Նա եղել է կրթութեան գործիչ, քատերական ասպարեզի վաստակաւոր դէմք, Իրանահայ գրողների միութեան անդամ:

Գեղամ Մովսիսեանը՝ Իրանի Միջնակարգ Դպրոցների ճատրակի Մրցութիւնների Ախոյեան

Քերմանշահում աւարտած երկրի միջնակարգ դպրոցների ճատրակի մրցութիւնների ընթացքում թեհրանահայ ճատրակորդ Գեղամ Մովսիսեանը Թեհրանի խմբում ընդգրկած՝ իրեն փայլուն է դրսեւրել:

Գեղամը 2-րդ խաղատախտակում յարթելով իր մրցակիցներին՝ առաջին է հանդիսացել, որն էլ անկասկած օգնել է, որ Թեհրանի խումբը 2-րդ պատաւոր տեղը գրավի:

Ազգային Բարերար Յովիհաննես (Վանիա) Սոլոմոննեան

Սոյն թականի յունիսի 4-ին Թեհրանում իր մահկանացուն կնքեց բարերար Յովիհաննես (Վանիա) Սոլոմոննեանը՝ 85 տարեկան հասակում: Յովիհանի 14-ին, նրա յուղարկաւորութեանը մաս-նակցեցին ազգային-հասարակական մարմնների եւ միութեանների ներկայացուցիչներ եւ հոծ թով հասարակութիւն:

Կրօնական արարողութիւնից յետոյ, Ս. Աստվածածին եկեղեցում, նորոգ հանգուցեալի կեանքին հանգանանորդն անդրադարձաւ Թեհրանի հայոց թէմի առաջնորդ Տ. Սեպոնի եպիսկոպոս Սարգսեանը: Ապա հանգուցեալի դին փոխադրեց Նոր Բուրաստան գերեզմանատուն, որ եւ ամփոփեց: Այնուհետեւ Թեհրանի Հայկանաց եկեղեցաւը միութեան կենտրոնատելիությարգանքի ու ցաւակցութեան սրտառուչ արտայայտութիւն ունեցաւ պրան. Արուեանը:

Թեհրանի «Սոլոմոննեան» միջնակարգ դպրոցի բարերար, Սեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ կարողիկոսի կողմից «Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրած Աքրահամ Սոլոմոննեանի (1891 թ. Շամշադինի Մովսէս գիշ-Հայաստան- 1982 թ. Նիւ-Եօրք-Ամերիկա) միակ զաւակն էր Յովիհաննես (Վանիա) Սոլոմոննեանը, որը հետեւց հօր օրինակին եւ իր ամբողջ ունեցուածքը նիրեց ազգին:

Ծննել էր 1917 թականին՝ Բաքում՝ դարաբաղջի ծննդերից: 1930-ական թականներին ընտանեօք փոխադրությ է Իրան եւ հաստատությ Թեհրանում: «Սան Լուի» միջնակարգ դպրոցն աւարտելոց յետոյ անցնությ Բեյրութ եւ յաճախութ տեղի ամերիկեան կոլեջու:

Ուսումը շարունակելու նպատակով, Լիբանանից մեկնութ է Գերմանիա եւ հետեւում էլեկտրոին-ժիմերութեան ճիշդին, որն աւարտութ է փայլուն վկայականով: Սի կարծ ժամանակ պաշտօնավարութ է Ա. Է. Գ. ընկերութեան մօտ: Երկրորդ աշխարհամարտի սկավելու ժամանակ վերադարձում է ծննդերի մօտ եւ օգնութ հօրը, որն արդէն յաջողած առեւտրական էր կտորենին ներածման

ասպարեզում: Այնուհետեւ շուրջ քասան տարի ընտանեօք ընակութիւն է հաստատութ Եղիստոսում եւ վերադարձում Թեհրան: Բազմազբաղ լինելու պատճառով՝ չի անդամակցել ազգային-հասարակական մարմիններին, սակայն օգտակար է եղել բոլոր ձեռնարկներին, յատկապէս կրթական ասպարեզում եւ միշտ սանուիիներ է պահել դպրոցներում:

Իրայասոուկ սէր ունէր ընթերցանութեանը եւ այդ քերումով ընդհանուր գիտելիքների լայն զարգացում էր ձեռք քերել: Զանազան նիւթերի շուրջ խորացած, գիտելիքների մեծ պաշարով օժտուած մէկն էր: Հետեւարար՝ շատ հաճելի, փնտրուած խօսակից: Աւելացնենք՝ համեստ ու մարդանօտ անձնատրութիւն էր:

Լաւածանօր էր ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն եւ ուստերէն լեզուներին:

Ուսումն արդէն անցել էր, բայց վարսուն տարեկան կամ վարսունը հազի անցած մարդու տպաւորութիւն էր քողուում: Սակայն, անազորոյն հիւանդութիւնը շատ կարծ ժամանակամիջոցում փշրեց այդ քաջառողջ մարդուն:

Յարգանք իր յիշատակին եւ հանգիստ իր աճրւնին:

ԱՐՅ

Սի Օրինագիծ Վաւերացւելով՝ Կը Հաւասարեցի Կրօնական Փոքրամասնութիւնների Եւ Սուսուլմանների Արեան Գինը

Թեհրան, ԻՌԱՆ-Ա Խորհրդարանի դատական ու իրաւական յանձնաժողովով մի օրինագիծ վաւերացրեց, որի խորհրդարանի լիակազմ նիստում վաւերացւելուց յետոյ, Իրանի կրօնական փոքրամասնութիւնների եւ մուսուլմանների արեան գինը: Յատկանշական է, որ երեկ գումարուած յանձնաժողովի նիստին ներկայ են եղել նաև Իսլ. խորհրդարանում հիւսիսային եւ հարաւային իրանահայութեան պատգամատրներ՝ որպէս Լեռն Դարեանն ու Ժորժիկ Աքրահամնեանը, նաև կրօնական այլ փոքրամասնութիւնների պատգամատրները:

Նա նշեց, որ ըստ այդ օրինագծի՝ Իսլ. յեղափոխութեան առաջնորդի հայեցողութեամբ եւ դատական ուժի կողմից նրան ուղղած հարցումից յետոյ, կը հաւասարեցի մուսուլմանների եւ կրօնական փոքրամասնութիւնների արեան գինը: Յատկանշական է, որ երեկ գումարուած յանձնաժողովի նիստին ներկայ են եղել նաև Իսլ. խորհրդարանում հիւսիսային եւ հարաւային իրանահայութեան պատգամատրներ՝ որպէս Լեռն Դարեանն ու Ժորժիկ Աքրահամնեանը, նաև կրօնական այլ փոքրամասնութիւնների պատգամատրները:

**Փոքրամասնութիւններին Օրինական Հաւասար
Դայմաններով Աշխատանքի Ընդունելու
Կարգադրութիւնը**

Իսլ. խորհրդարանում իրանահայութեան պատգամատրները տեղեկացնում են, որ ի հետեւում կրօնական փոքրամասնութիւններին մուսուլմանների հետ համահայար պայմաններով աշխատանքի ընդունելու խնդրով հանրապետութեան նախագահի առաջին արած կարգադրութիւնների Կադրերի բաժնի գերագոյն մարմինը վերոյիշեալների շրջաբերականների

Հրապարակություն

լուսապատճենները յիել է երկրի բոլոր կաղրերի քամիններին՝ առ ի գործադրում:

Կապույտ մզկիթի հարեւանությամբ բացվեց հրանական պետական լրատվական կենտրոն

Երեւանի հրանական Կապույտ մզկիթի հարեւանությամբ բացվեց հրանի Իվանական Հանրապետության ռադիոհեռուստատեսության լուրերի կենտրոնական բաժանմունքի հայաստանյան գրասենյակը: Ներկա էին Հայաստանում հրանի դեսպան Մոհամմադ Ֆահրադ Քոյենին, դեսպանատան դիմանագետներ, Հայաստանի արտգործնախարարության ներկայացուցչը, լրագրողները: Դեսպան Քոյենին բացման խոսքում կարեւորեց Հայաստանի և Իրանի լրագրողների, ՉԼՍ-ների համագործակցությունը: Ինչ ռադիոհեռուստատեսության բոդրակից, լուրերի կենտրոնական բաժանմունքի հայաստանյան գրասենյակի պաշտոնական ներկայացուցիչ Ալիսա Մանուկյանը հոյս հայտնեց, որ գրասենյակի բացումը իր և հայ լրագրողների համագործակցությունը կլրացնի տեղեկատրվական վակուումը, տեղեկատվությունն այսուհետ կինի ոչ թերի և չխեղաքյուրված:

Արտերկրուու Բնակուող հրանցիների հրան Վերադարձի Համար Դիրութիւններ Են Ստեղծել

ԻՌՆԱ- Արտգործնախարարի հիմաստոսական ու իրաւանական հարցերով տեղակալ Մոհամմադալի Հադին երեկ լրագրողների հաւաքում նշել է, որ արտերկրուու բնակուող իրանցիների կապը երկրի հետ դիրացնելու համար՝ միջոցներ են ընձեռուել, որով բոլոր այն իրանցիները, որոնք անձնագիր ունեն, կարող են դիմելով Իրանի դեսպանատների հիմաստոսական քամինը՝ իրանական անցագիր ստանալ: Անցագիր կը տրի նոյնիսկ նրանց, ովքեր առանց դեսպանատների համարդրեան՝ անցագիր են ստացել այլ երկրներից:

Պրճ. Հային աւելացնելով, որ հիմաստոսական բաժնում նոյնական լուծել է արտերկրուու բնակուող իրանցիների գիտուրական ծառայութեան դժւարութիւնը, բացատրեց. «Հստ օրենքի՝ նրանք, ովքեր անօրինական կերպով են քողել Իրանը, նրանց պատիճն է՝ քանիմասեայ բանտարկութիւն և հինգիարիլ հազար դիալ տուգանքի վճարում, սակայն դատական ուժի հետ կատարած բանակցութեամբ՝ այդ լիազօրութիւնը այժմ տրել է դեսպանատներին»:

Նա աւելացրեց, որ նման անհատներ դեսպանատըներում հարցարերթիկներ պիտի լրացնեն, որից յետոյ արտգործնախարարութեան ներկայացուցիչը դատարան դիմելով եւ անհատի բացակայութեան խնդրով դատավարութիւն կազմակերպելով՝ ենթական կը ստանա անցագիր՝ Իրան ճամբորդելու համար:

Արտգործնախարարութեան պաշտօնեան, ի պատասխան արտագաղթի եւ ուղեների փախուստի մասին տրած հարցումի, ասաց, թէ արտագաղթը ուղեների փախուստի իմաստով չէ. իրաքանչիր մարդ կարող է արտագաղթել, որին մենք չենք միջամտում, այլ աշխատում ենք առիթներ ստեղծել, որպէսզի նրանք իրենց կապը պահեն երկրի հետ:

Նա նշելով նաեւ, որ երկակի քաղաքացիութեամբ շուրջ երեք միլիոն իրանցիներ են բնակուում արտերկրում, ասաց, որ նրանցից իրաքանչիրը դիմելով Իրանի ներկայացուցչիներ՝ կարող է լուծել իր դժւարութիւնը՝ բացի այն պարագայում, որ սեփական գանգատաւոր ունենայ կամ ոճրագործ լինի:

ԹՅ ԵՇ Յ

Գիտական նոր հայտնագործություն Հայաստանում

Բնության եւ հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի և Ռուսական մասնակիությունների ակադեմիայի հայաստանյան մասնացուղթի նախազարդությունների մեջ շաբաթ առաջ կայացած ընդհանուր նիստում ունեցավ Մշակութային կապերի հայկական ընկերակցության դահլիճում. հայտարարվեց երկու ակադեմիաների հայաստանյան մասնացուղթի նախազարդար քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Մելիք-Օհանջանյանի եւ նրա սասպիրանտ Վիկտոր Խաչատրյանի հայտնագործության մասին, հանձնվեցին հեղինակային իրավունքի վկայականներն ու մեղալները:

Գիտական հայտնագործության առիթով «Ազգը»

հանդիպեց պրոֆեսոր Ռաֆայել Մելիք-Օհանջանյանի հետ՝ նանրամասն տեղեկություններ ստանալու նպատակով:

Եվ այսպես, ո՞րն է հայտնագործության էությունը:

Պրոֆեսորը հայտնագործել է Օ-նիտրոֆենոլի մինչ այժմ

չբացահայտված հատկությունը, որն անհրաժեշտ է ընտրողական դեսպանագնան պրոցեսում:

Դա հնարավորություն է ընձեռում ստանալու հակառակության դեղամիջոցների պատրաստման համար անհրաժեշտ

բիոգեննուկլեոզիդների միացությունը: Վերոհիշյալ ռեակցիայի նոր մոդիֆիկացիան քիմիական գիտության մեջ

մուտ ապագայում կանվանվի Հիլբերտ-Զոնտն-Մելիք-

Օհանջանյանի ռեակցիա: Այն լայնորեն կիրառվում է Ռուսաստանի, Մ. Նախանգների, Շապոնիայի եւ այլ երկրների լարորատորիաներում՝ կենսաբանորեն ակտիվ նյութերի սինթեզման նպատակով:

Այդ հետազոտությունների հիման վրա պրոֆ. Մելիք-Օհանջանյանը ստեղծել է հակառակության նոր պատրաստուկ՝ օժտված ուկրածին ուսուցիչների վրա հզր ուղղութեանիբիլիզացնող ազդեցությամբ: «Նիտրոֆոր» անվամբ այդ պատրաստուկը շուտով կկիրառվի բժշկական պրակտիկայում:

Գիտական նոր հայտնագործությունը լայն ասպարեզ է բացում կենսաբանական ակտիվ միացությունների ստացման համար եւ նորարարությամբ համապատասխանում է ժամանակակից գիտության պահանջներին: Հայտնագործության առաջնորդյունը պաշտպանվել է հեղինակային իրավունքով 1983 թ., որը իրավարակվել է «Ուռուցքի քիմիաբուժությունը ԽՍՀՄ-ում» գիտական ամսագրում (1985 թ., N 42): Հավելենք, որ պրոֆ. Ռաֆայել Մելիք-Օհանջանյանն ավելի քան 200 գիտական աշխատանքների ու հոդվածների, ինչպես նաև 30 գյուտերի հեղինակ է: Վերջին տարիներին

Հրապարակություն

պրատուն գիտնականը զբաղվում է նաև չինական հնագույն բժշկության մեջ հայտնի «ՈՒեյշի» սնկի ուսումնափրառությամբ, որը ճապոնիայում առաջ բերեց գիտահետազոտական մեծ հետաքրքրություն: Նրան շնորհվել են միջազգային բազմաթիվ գիտական կենտրոնների պատվավոր պրոֆեսորի կոչումներ ու շքանշաններ, «Գիտության ասպետի» տիտղոս: Իսկ գիտական հայտնագործության աշխառվ նրան շնորհվեց Ռուսաստանի ԳԱ «Գիտական հայտնագործության հեղինակին» հուշանդալ, որը կրում է Նորելյան մրցանակի դափնեկիր Պյոտր Կավիցայի անունը:

90 մլն դոլար օգնություն Հայաստանին + 3 մլն դոլար ռազմական

Մ. Նահանգների Սենատի արտաքին հարցերի համապատասխան ենթահանձնախումբը իր երեկով նիստում հաստատեց 2003 թ. ֆինանսական տարվա համար Հայաստանին հատկացվելիք գումարի չափ՝ 90 մլն դոլար որպես սովորական օգնություն եւ 3 մլն դոլար՝ ռազմական բնագավառի համար, հաղորդում է ՀՀԴ-Վաշինգտոնի Հայ դատի գրասենյալը, որն ամերիկահայ լորրիստական այլ կազմակերպությունների հետ վերջին շրջանում զանք էր թափում անցյալ տարվա հատկացման այդ ծավալը պահպանելու համար:

Համենայն դեպքում, ի տարրերություն նախորդ տարվա, ռազմական բնագավառի հատկացմանը կրծատվել է 1,3 մլն դոլարով եւ ընդամենը կազմում է 3 մլն:

Նոյն գրասենյալից տեղեկացնում են նաև, որ ներկայունս աշխատանք է տարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն ամերիկյան մարդասիրական օգնություն ապահովելու համար:

Կարս-Գյումրի երկարգիծը կրացվի թերեւս 1 տարվա ընթացքում Նշում է Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի խորհրդականը

ԵՐԵՎԱՆ, 1 ՕԳՈՒՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Եթե սոցիալ-դեմոկրատները Թուրքիայում գտն իշխանության, Կարս և Գյումրի քաղաքների միջև հաղորդակցությունը կարող է վերսկավել 1 տարվա ընթացքում», հայտարարեց Թուրքիայի ազգային անվտանգության խորհրդի խորհրդական, Եվրախական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի Ռուսաստանի բաժանմունքի ղեկավար, Անկարայի համալսարանի աշխատակից պրոֆեսոր Հայան Քյոնին: Հայան Քյոնին ինքը նախկին արտօրքնախարար Զեմի ստեղծած Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ չէ, բայց, իր խոսքերով, համակիրների շարքում է:

Ըստ Քյոնինի, այս հետանկարը կախված է մի շարք զարգացումներից, որոնց թվում է կովկասյան երկրների փոխադարձ ինտեգրման գործընթացը: Ներկայումս աշխարհում գործող որոշ դաշինքներ, որոնց թվում Եվրամիությունը, առավելապես կարեւորում են տնտեսական համագործակցությունը եւ բացառում արտաքին աշխարհի հանդեպ ուժային տարրերակների կիրառումը: Թուրքիան եւս, ձգտելով դառնալ Եվրամիության անդամ, իր համար առաջնային է համարում տնտեսական

շահերը: Անկարան, նշեց փորձագետը, այս նպատակով մասնավորապես հարաբերություններ է զարգացնում Մուկվայի հետ:

Ռուսաստանը, Հայան Քյոնինի կարծիքով, խոչընդոտում է Հայաստանի ինտեգրմանը Թուրքիայի եւ Արեւուտքի հետ, քանի որ, կորցնելով Աղրբեջանը եւ Վրաստանը, Մուկվան կանգնած է Հայաստանը կորցնելու եւ Կովկասից վերջնականապես կտրվելու վտանգի առաջ: Այս համատերսում նա չի բացառում ռուսական սաղմանները Կովկասի նկատմամբ, որոնց հիմքում ընկած կլինի Կովկասում սեփական ներկայությունը երկարածելու ծգուումը: «Կովկասը խիստ կարեւոր է Ռուսաստանի համար աշխարհադարձական, ռազմապատճենական, տնտեսական առումներով, այս տարածաշրջանով են անցնում Ռուսաստանի համար կենսական կարեւորություն ունեցող 2 էներգատարեր՝ «Երկնագույն հոսքը» եւ Բարու-Նովոռուսիյսկ նավատարը: Միաժամանակ, տնտեսական զարգացումն առաջնային ուղղություն համարող Թուրքիան նկրտումներ չունի մեր տարածաշրջանի եւ մասնավորապես Հայաստանի հանդպա:»- հայտարարեց Քյոնին:

Դրա հետ մեկտեղ, Կովկասում թուրքական ռազմական ներկայության վերջին ակտիվացումը նա շաղկապում է խլամական արմատականության տարածումը կանխելու եւ կառուցված ու կառուցվելիք էներգատարերը պաշտպանելու՝ թուրքական կողմի ձգտման հետ: Միաժամանակ, Անկարան ցանկանում է օգնել Աղրբեջանին պաշտպանվել իրանական հնարավոր սպառնալիքից, մասնավորապես Կասպիջի ավազանում, ինչի հարցում Թուրքիան ունի Աղրբեջանի համաձայնությունը:

Թուրք գործիքը նաև կարծիք հայտնեց, որ Բարու-Ձեյհան նավատարի մի ճյուղը պետք է անցնի Հայաստանի տարածքով՝ նշելով, որ դա թե՛ բաղարականապես, թե՛ տնտեսականապես, առավել նավատակահարմար է:

ՃՅՆ է ։ ՃՅՆ

Արամ կարողիկոսը մերժել է հաստատել Կանադայի անթիլիասական առաջնորդի ընտրությունը

Բեյրութում լույս տեսնող ՌԱԿ «Զարթօնք» օրաթերթից տեղեկանում ենք, որ Սեծի տանն Կիլիկիո Արամ Ա կարողիկոսը մերժել է հաստատել վերջերս Կանադայի անթիլիասական նոր թեմի պատասխանատուների կողմից Խաչակ եպս. Հակոբյանի թեմակալ առաջնորդի ընտրության արդյունքները: Արամ կարողիկոսը, որը դեռևս հունիսի սկզբներին Անթիլիաստում գումարված Ազգային ընդհանուր ժողովում հանդես էր եկել Հայ եկեղեցու եւ հայ ժողովույթի ներքին միասնականությունը պահպանելու համար Կանադայում անթիլիասական առաջնորդ ընտրելու քայլից ձեռնպահ մնալու կոչով առանձին նամակ է հղել Վերոհիշյալ պատասխանատուներին եւ խստորեն քննադատել նրանց այդ քայլը: Այդ նամակում կարողիկոսը ոչ միայն մերժել է վավերացնել առաջնորդի ընտրությունը, այլև վերահաստատել է Խաչակ եպիսկոպոսին կարողիկոսական փոխանորդի պաշտոնում:

Արամ Կարողիկոս կը մերժէ վաւերացնել Գանատայի անքիլիասական թեմի առաջնորդի ընտրութիւնը

Ինչպէս ծանօթ է, 1 Յունուար 2002 բուականէն սկսեալ Անքիլիասի պատկանող Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան քեմը Գանատայի շրջանը առանձին թեմի վերածեց: Հակառակ այս իրողութեան, որ Անքիլիասը բնական կը նկատէր այս քայլը, էջմանական շրջանակների դժգոհութեամբ բնորոշեցին զայն:

Աացուրինը դեպի մեծմացում տանելու եւ հայ եկեղեցու ու ազգին ներքին միասնականութիւնը աւելի ամրապնդելու նախաձեռնութենէն մղուած, Արամ Կարողիկոս յատուկ ճիզ քափեց, որպեսզի Յունիսի սկիզբը զումարուած Ազգային Ընդհանուր Ժողովը որդեգրէ այս ուղղութեամբ քանածեն մը: Ազգային Ընդհանուր Ժողովը որդեգրեց Վեհափառ Հայրապետին առաջարկը: Այս քայլը նեծապէս դրական արձագանք գտաւ բոլոր շրջանակներէն ներս:

Սակայն հաւաստի աղքիրներէ կ'իմանանք. քե Գանատայի նոր թեմի պատասխանատուներ, հակառակ այս բոլորին, անցեալ շաբաթ, յատուկ ժողովով մը Գանատայի առաջնորդ ընտրած են հածակ եպս: Թակորեանք:

Այս կացուրեան դէմ յանդիման, Արամ Ա. Կարողիկոս, զործակցուրեան եւ միասնականութեան նոյն նախանձախնդրութենէն առաջնորդուած, Գանատայի թեմական իշխանութիւններու յդուած նամակով մը խստործ կը բննադատէ այս քայլը եւ կը մերժէ վաւերացնել առաջնորդի ընտրութիւնը: Վերահաստատելով Խածակ Եպիսկոպոսը որպէս կարողիկոսական փոխանորդ:

«ԶՄԹԾՈՒՔ», 13 Յուլիս 2002

Հիշեցնենք, որ անցյալ հունվարի 1-ին վերոհիշյալ թեմի կազմությունը մեծ վլրովմունք էր առաջացրել ազգային նկեղեցական շրջանակներում:

Ի պատիվ Կանադայի խորհրդարանի եւ Սենատի հայամետ անդամների

Օրեւ Մոնթեալի Սր. Գր. Լուսավորիչ առաջնորդանստ եկեղեցու համագաղութային հարգանք է մատուցվել Կանադայի խորհրդարանի եւ Սենատի հայամետ անդամներին, որոնց հետևողական աշխատանքով հունիսի 13ին Կանադայի Սենատը ընդունեց Հայոց ցեղասպանության մասին հայտնի բանաձեւը, որը երկրի կառավարությունից պահանջում էր նոյնպես ծանաչել Ցեղասպանության փաստը: Մասնավորապես հարգանք է մատուցվել Սենատի անդամներ տիկին Շըրլի Մահյոյին, պարոնայր Ռեյմոն Սերլաքուերն եւ Սարսել Պրյուդոմին, որոնց դերն անգնահատելի էր այդ գործում: Նրանց հանձնվել է «Կանադահայ համայնքի պատվի անդամ» կոչումը ներկա հասարակության բուռն ծափահարությունների ներքը:

Հանդիսության ընթացքում ֆրանսերեն ելույթ է ունեցել Կանադայի թեմի առաջնորդ Հովհանն արք. Տերտերյանը եւ բարձրորեն գմահատել արդարության հաստատման գործում սենատուների մատուցած ծառայությունները:

Հանդիսության նախաձեռնողների անունից ֆրանսերեն ելույթ է ունեցել Ռ-ԱԿ Կենտրոնական վարչության անդամ դոկտ. Արշավիր Գյոնճյանը, որ իհացմունքը է արտահայտվել այլազան խոշոլությունների պայմաններում սենատուների ներդրած ջանքերի եւ Ցեղասպանության ճանաշման գործնքացը խորհրդարանում հաջողությամբ պասկելու համար:

Դոկտ. Գյոնճյանը գնահատանքի խոր է արտասանել նաև այդ գործում կանադահայ տարբեր կազմակերպությունների՝ Ռ-ԱԿ Հայ իրավանց խորհրդի, ՀԲՀ Սկզբանը, Թեքեյան մշակութային միության, Պոլահայերի միության, Եղիպատահայերի ընկերակցության, Իրանահայերի «Րաֆֆի» մշակութային միության լրբիստական երկարատև շաճքերի համար:

Արամ Ա կարողիկոսը պարզեւատրել է Լիբանանում Կանադայի դեսպան Հայկ Սարաֆյանին

23.07.2002-Լիբանանում դիվանագիտակ առաքելությունն ավարտելու արքիվ հուլիսի 22-ին Բիթֆայայի Ս. Աստվածածին մատուցում տեղի է ունեցել Լիբանանում Կանադայի դեսպան Հայկ Սարաֆյանին նվիրված հանդիսություն եւ պարզեւատրման արարողություն:

Երեկոյին ներկա էին պետական, քաղաքական, կուսակցական, դիվանագիտական անձինք, ազգային ու միութենական մարմինների ներկայացուցիչներ, հյուրեր: Արամ Ա կարողիկոսն իր խորում ասաց, թե պետք է գնահատել արժանավորներին, որոնք իրենց կյանքով, աշխատանքով ու գործողություններով հարգանք են ներշնչում: Նա նշեց, որ Հայկ Սարաֆյանը այդ արժանավորներից է: Արամ Ա-ն հավելեց, թե Հ. Սարաֆյանը պարզապես հայ դեսպան չի եղել, այլ նա մեծ հարգանք է պայելել Լիբանանում, շփել հայության հետ ու ներկա եղել համայնքի բոլոր միջոցառումներին եւ չի զացել առավելագույն անել հայության համար: Վեհափառ Հայկ Սարաֆյանին պարզեւատրեց Սնձ Տանն Կիլիկիո կարողիկոսության ասպետի շքանշանով:

«Հայ համայնքի մասնակցությունը Շվեյցիկ գարզացմանը»

Վերոհիշյալ թեմայի շորջը, «Բերիում դե Տրեմբլեյ» դահլիճում, Կանադայի հայ կանանց միության ատենապետուի դոկտ. Խարուն Թեմիզջյանը դասախոսություն է կարդացել հայ եւ օտար հասարակայնության ներկայացուցիչների առաջ, հաղորդում է «Ապագայ» շաբաթաթրը: Դասախոսությունը կազմակերպված է եղել «Մշակույթների ժամանակավայր» տարբեր ազգերից բաղկացած ֆրանսախոսների կազմակերպության կողմից: Նշվել են Շվեյցիկի գրական, արվեստի, ուսուցչական, քաղաքական եւ տնտեսական մարզերում աշխատող բազմաթիվ հայազգի ականավոր դեմքերի անունները, որոնց բվում նաև այդ կազմակերպության պատվագոր նախազան Մարիկին Գենետերճյանի անունը, որը մի շաբաթ պատվոգերի ու շքանշանների արժանացած ամենահարգված երաժշտարանն է քաղաքում: Գեղարվեստական բաժնում լսվել են հայկական երգեր, որոնցից յուրաքանչյուրի մասին

Հրապանին

Փրանսերենով հակիրճ տեղեկություն է տվել Քրիստինե Գույումճյանը: Դաշնամուրով ընկերակցել է Սիրվարդ Նշանյանը:

Կախճանվեց Յուսուֆ Քարշը

Վիրավի օրը՝ յուլիսի 14-ին կեսօրից հետո CNN հեռուստակայանը հայտնեց, որ Բոստոնում 93 տարեկանում վախճանվել է համաշխարհային հռչակի արժանացած հայազգի լուսանկարիչ Յուսուֆ (Հովսեփ) Քարշը: Նա մահացել է, ըստ ինտերնետային տեղեկատվության, Բրիգհեմ հիվանդանոցում, շաբաթ օրը, հետվիրահատական քարություններից:



Ծնվել է 1908 թ. դեկտեմբերի 23-ին Արեւմտյան Հայաստանի Մերտին քաղաքում, որը 1915-ին դառնում է քորքական վայրագությունների ամենասոր դրսերությունների քատերաբեմը: Նրա հարազատներից շատերն են գրիվում, իսկ քույրը մահանում է քծավոր տիֆի համաձարակից: Խորտակված ընտանիքին հաջողված է փախչել Սիրիա՝ Հայեա: Սի քանի տարի անց՝ 1924-ին Յուսուֆին ուղարկում են Կանադա՝ միանալու հորեղայր Ջորջ Նարաչին, որին երբեք չեր տեսել եւ որը լուսանկարիչ էր Շերբրուկում (Քվեբեկ): Վերջինիս օժանդակությամբ նրա երազանքն իրականություն է դառնում: Աշակերտում է նաև բոստոնարնակ հայ լուսանկարիչ Ջոն Կարոյին, որը իր իսկ խոսքերով, «սովորեցրեց տեսնել եւ տեսածը մտապահել»:

Առաջին արվեստանոցը բացում է 1932-ին: Իսկ մեծագույն հնարավորությունը հայտնվում է 1936-ին, եթե լուսանկարում է Կանադայի ընդհանուր կառավարիչ լորդ

Թուիդսմուիրին, վարչապետ Մաքենզի Կինզին եւ Կանադայում հյուրընկալված Ս. Նահանգների նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին: Դրանից հետո նա լուսանկարում է Ուինսոն Չերչիլ ամենահայտնի լուսանկարը: «1941-ի դեկտեմբերի վերջին Չերչիլ Օտտավա եկավ խորհրդարանի առաջ ելույթ ունենալու: Կանադայի վարչապետը ցանկություն հայտնեց, որ նրան լուսանկարեն: Ես մեկ օր դրան նախապատրաստվեցի: Հաջորդ օրը, երբ արվեստանոց մտավ, այնտեղ նրան սպասում էին մի բաժակ խմիչքն ու սիգարը: Միացրեցի լոյսերը: Հանկարծակի եկած «ի՞նչ է կատարվում» բռնկեց: Հարցրի, թե կարելի՞ է նկարել նրան: «Միայն մեկ անգամ», ասաց նա սիգարը բերանին: Ես մտեցա, սիգարը զգուշությամբ հանեցի բերանից եւ մինչ վերադառնում էի իմ խցիկը, նա այնպիսի տեսք էր ընդունել, կարծես տեղն ու տեղն ինձ քվատելու էր», հիշում է Քարշը:

Դմկամորեն սիգարից զրկված Չերչիլ խոժող դեմքն այնքան տպավորիչ է ստացվում, որ մեծ աղմուկ է քարձրացնում եւ հետագայում դրոշմանիշների վրա տպագրվում: Լուսանկարի է նաև այնպիսի հայտնի դեմքերի, ինչպիսիք են դը Գոլը, Ներուն, Ժակին Քենենին, Խորչչովը, Կաստրոն, Գագարինը, Պիկասոն, Հեմինգվուը, Մունքը, Սիրելիուսը, Շոուն, Թեյլորը, Հեայրունը եւ այլն:

«Երբ անվանի մարդիկ անմահանալու մասին են մտածում, նրանք Քարշի մոտ են գնում», գրել է Ջորջ Պերրին լուղոնյան «Սանդեյ Թայմսում»: 1997-ին Օտտավային ցտեսություն ամեղով, նա իր կանց բժշկագիտության մասնագետ Էստրելիտայի հետ տեղափոխվում է Բոստոն, իր դասական դիմանկարներից մի փոքր հավաքածու բրոնելով 16 տարի իր տունատուիլիան հանդիսացող Շատո Լորիեյում: Նրա լուսանկարները ցուցադրվել են Նյու Յորքի Մետրոպոլիտեն, Ժամանակակից արվեստի եւ Սենտ Լուիսի բանգարաններում, Կանադայի ազգային պատկերասրահում (Օտտավա), Փարիզի ազգային գրադարանում եւ այլրու:

ԱՄՆ-ի եւ Կանադայի մի քանի համալսարաններ նրան շնորհել են իրավաբանական գիտությունների եւ արվեստագիտության դրսուրի աստիճանները: Լուսանկարչության մասին հրատարակել է զրբեր, կարդացել դասախոսությունները: Ելույթներ է ունեցել Ֆինլանդիայում, Գերմանիայում եւ ԱՄՆ-ում կայացած լուսանկարչության համաշխարհային համագումարներում: Տասնմեկ երկրներում նրա լուսանկարները պատկերվել են դրոշմանիշների վրա: «Նա աշխարհի մեծագույն դիմանկարային լուսանկարչն է», ասել է Քարշի մասին Անոնիլու անունով ամերիկացի մի լուսանկարիչ: Նրա մոտ լինել նշանակում էր համաշխարհային ճանաչում ձեռք բերել: Էլ Ալամեյնի բրիտանացի ֆելդմարշալ, հայտնի հրամանատար Մոնտգոմերին նրա մոտ նկարվելու արարողությունն անվանել է «ՔԱՐՇացում»: Նա մարդկանց խառնվածքը բացահայտող կախարդ էր, որի գործերն ինչպես գեղագիտական, այնպես էլ ալատմական մեծ նշանակություն ու արժեք ունեն:

Հրապարակություն

Հարկ է նշել, որ Քարշի մահվան լուրը լայն արձականք գտնու միջազգային, մասնավորապես կանադական գանգվածային լրատվական միջոցներում, և Կանադայի վարչապետ Ժ. Կրետիանը հատուկ ցավակցական նամակ է հրապարակել: Օտտավայի Siccene and Technology Museum-ը (Գիտության և տեխնոլոգիայի բանարան) հատուկ մի տաղավար է հատկացրել Յունիվ Քարշին, որի կենսագրական տվյալների բաժնում նշվում է նրա հայկական ծագման և ծննդավայր Հայաստանի մասին:

Ֆրանսերեն գիրք՝ ցեղասպանությունը Վերապրած կողո ճամփան

ՓԱՐԻԶ, 1 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փարիզում լույս է տեսել հայեալմիրական ծագմամբ հեղինակ Ֆարիդ Բուտելայի «Մեմն դ'Արմենի» («Հայաստանցի տատիկը») վերնագրով պատկերագրով:

Իր բովանդակությամբ աննախանհպ այս գիրքը, ըստ «Ազատության», մեծ հետաքրքրությամբ է ընդունվել հայ համայնքում: Այն ունի ինքնակենսագրական բնույթ, որի հերոսի՝ մահմերական դավանանքի տեր փոքրիկ Մահմութի, կյանքը փոխվում է այն ժամանակ, երբ նա հայտնաբերում է իր քրիստոնյա, ցեղասպանությունից փրկված հայ տատիկին, որն ամուսնու մահից հետո Ալմիրից զախի է Ֆրանսիա և հաստատվում դրու ընտանիքում: Չնայած հայեալմիրական անունությունները հազվադեպ են, բայց հեղինակի տատը՝ Մարի Պետրոս Կարամանյանը, ինչպես ցոյց է տալիս նրա ամուսը, հայ եր: «Պապս հանդիպել եր նրան դարասկզբին, Թուրքիայում, ամուսնութեա, մինչեւ մեծ մորս ընտանիքը զոհ էր գնացել թուրքական հայածանքներին, նրանք արտագաղթել են Թուրքիայից և նեկան Ալմիր, որը ծնվել է հայրու», - հայ համայնքի հետ ունեցած մի հանդիպման ժամանակ պատմել է գրքի հեղինակը: Հեղինակի խոսքերով, նրա տատը խորապես հավատացյալ էր, եւ այն, ինչ պահպանել էր Հայաստանից, ամենից առաջ հավատն էր: Նա երբեք չէր խոսում իր ընտանիքի պատմության, ցեղասպանության մասին: «Չնայած դրան, ես միշտ էլ տեղյակ եմ եղել այդ պատմությանը», ասել է հեղինակը: «Մեմն դ'Արմենի» գրքում հայ տատի արցունքներն են պատմում ամեն ինչ այն ժամանակ, երբ նա, իր բազմանդամ ընտանիքի լուսանկարը ցոյց տալով բռնանը, բացատրում է, թե ոչ իր ծնողները եւ ոչ էլ իր ընտանիքի մյուս անդամները չեն մահացել իրենց բնական մահով:

Կոնգրեսի հայկական հարցերի հանձնաժողովի անդամների թիվը հասավ 120-ի

Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ) տեղեկացնում է, որ Կոնգրեսի հայկական հարցերի հանձնաժողովը համալրվել է եւս վեց ամերիկացի օրենսդրությունում Լոյի Քափս (դեմոկրատ Կալիֆորնիայից), Դեյվիդ Դրեյթը (հանրապետական Կալիֆորնիայից), Ջոն Լոֆքրեն (դեմոկրատ Կալիֆորնիայից), Կարեն Մակրարթի (դեմոկրատ Միսուրիից), Դայանա Վարսոն (դեմոկրատ Կալիֆորնիայից) և Զակա Ֆարան (դեմոկրատ Ֆիլադելֆիայից): Այսպիսով, Կոնգրեսի հայկական հարցերի հանձնաժողովի անդամների թիվը հասավ 120-ի, որոնցից 36-ը՝ Կալիֆորնիայից:

Հանձնաժողովն ուշադրության կենտրոնում է պահում ԱՄՆևՀայաստան, ԱՄՆ-Նարարադ հարաբերությունները, դարարադյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը, Թուրքիայի եւ Աղբեջանի կողմից շարունակվող Հայաստանի եւ ԼՂԱի շրջափակումը, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը: Հանձնաժողովի համանախագահներն են հանրապետական Ձու Նոյեմբերով եւ դեմոկրատ Ֆրենք Փալոնը: Վերջինս պատրաստվում է մոտակա օրերին ժամանել ԼՂՀ հետեւելու օգոստոսի 11-ին կայանալիք նախագահական ընտրություններին:

Իսրայելում իրատարակության պատրաստված «Յեղասպանության հանրագիտարանը»

Արաբուրբին համեմատում է Հիտլերի հետ

ՍԱԱՐՈՒԻԼ, ՇՈՅՑԱՆ ՏԱՊԱՆ: «Սարահ» օրաթերթը ուշագրավ տեղեկատվություն է հայտնում այն մասին, որ Թուրքիայի խորհրդարանի գրադարանում ներկայացված երկիասոր «Յեղասպանության հանրա-գիտարաննը», որ տպագրության է պատրաստվել Խորայելում եւ հրատարակվել ԱՄՆ Կալիֆորնիայի նահանգում անարգում է Արաբուրբին եւ Հայոց ցեղասպանության մասին տվյալներ է պարունակում: Մասնավորապես հանրագիտարանում Արաբուրբին անունը համեմատվում է Հիտլերի եւ Հիմլերի հետ: Անրադարձ կա թե 1915 թ. Հայոց եղենին, թե 1909 թ.-ի Ալանայի ջարդերին:

Թուրք պատմաբան Թյուրքքայա Արավը, որ Հայկական հարցի շուրջ մոտ 80 գրքերի հեղինակ է, այս արիթրով հայտարարել է. «Հնարավոր չէ պատկերացնել մի այլ հանրագիտարան, որում այսքան շատ թվով սխալներ լինեն: 1999 թ.ին շրենորեն հրատարակված գիրքն ամբողջությամբ արտահայտում է հայկական տեսակետները: Անկարայում Հայկական ուսումնասիրությունների կենտրոն կա, արդյոք իրենք այս գրքից տեղյակ չե՞ն»: Ուշագրավ է, որ նախան բացահայտումը գիրքը մի քանի ամիս ցուցադրված է եղել բորբական խորհրդարանի գրադարանի ցուցակեղկում:

Փողոց հայ բժշկի անունով

Պավիա (Խտախա) քաղաքի մոտակայքում գտնվող Դորն գյուղաբանարքի փողոցներից մեկը վերջերս վերանվանված է հայագի բժշկի Օննիկ Ավագյանի անունով, հաղորդում է Կանադայի «Ապագայ» շաբարաթերթի հունիսի 10-ի համարը:

Ավագյանը ծնվել է 1905-ին եւ բժշկական կրթությունն ստացել է Դորնոյում: 1943-45 թթ. պատերազմի տարիներին եղել է ազգային ազատագրական կոմիտեի՝ «Գայրողի» խմբի հրամանատար: Ամուսնացած է վիեննաբնակ Հերմինե Արվանյանի հետ եւ 1966ին պարգևատրվել է Խտախայի Հանրապետության Ասպետի տիտղոսով: Սինչեն իր մահը՝ 1975թ., նա սարկավագ է եղել Սիլանոյի Սուրբ Քառասուն Մանկունք Հայ առաքելական եկեղեցում, որտեղ փողոցի բացման հաջորդ օրը հոգեհանգստյան արարողություն է կատարվել: Խոկ փողոցի վերանվանման առիթով խոր առնելով, քաղաքապետ Նեկրոցինին անդրադարձել է Օննիկ Ավագյանի օրինակելի անդամակորպանը որպես մարդ բժիշկ, քաղաքապետ ու քաղաքացի եւ քաքար զնահատել նրա արժանիքները:

ՅԱԿԵՐԺԱԿԱՆ ՅԱՅԱՍԱԾ

**Զես նաշվի դառնա ի հող,
Գործ մնա հիշտակող:
միջնադարի հայ աճանում գրի:**

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ հուշակորողը հայ ժողովրդի ոգու քարակերտ դրսարումն է, նրա հազարամյա անցած ուրու յուրօրինակ պատկերումը քարի մեջ: Այն հայ ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի քարեղեն մարմնացումն է:

Հուշակորողի պատկերը կազմված է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ նորահաստատ պետականությունը խորհրդանշող առնականացող երթափառության կամաց կարգությամբ առաջարկության մեջ, կարծես, միզ է անում վերջնականացեաւ ազատվելու իրեն կաշկանդող կապանքներից և խոյանալու առաջ: Կերպարն ընդհանրական պատկեր է և իր մեջ ամբարել է հայ ժողովրդի աննահանջ պարագի, հարանակի ծգտման և անսակարկ նվիրումի զգացումը: Ցանկացողը նրա մեջ կարող է տեսնել և՝ հաղթանակի աստված Վահագնին, և՝ ազգային դյուցազնավեպի հերոս Սատունցի Դավթին, և՝ Ազրավարդից դուրս եկող Փոքր Սիերին, և՝ մեր անցյալի ու նորօրյա ազատամարտի նվիրյալներին: Ամեն մեկն իր հոգու պատկերը կարող է փոխանցել կերպարին:

Երթափառության պատկերաքանդակը խարսխված է հաստատում և անսասան հիմքի վրա, որի շրջագընը քանդակված են հայ ժողովրդի հնինության հիմքը կազմող, նրա ոգին ձևավորող և նրա ընթացքը պայմանագործ խորհրդապատկերները:

Դակատահայց մասում իշխում է իր հյուծված զավակին կերակրող, մահին դուռ հասած, բայց մահվան հետ չհաշտվող հայ մոր կերպարը: Սա հայ ժողովրդի անցյալի ամենաորերգական էջի՝ ՀԱՅՈՅ ՄԵԾ ԵՂԵՇՈՒՆԻ, պատկերումն է: Մայրը կարծես վերջին ջիգով աղաղակում է պապանձված արդարության մասին: Նրա ջղապինի աջը վեր է բարձրանում՝ արդեն ոչ թե խնդրելու, այլ պահանջելու արդարությունը: Խորաքանդամը կողմնորոշված է դեպի արևածագ և ամեն օր նորանում է արևի առաջին շողերի հետ:

Նույն՝ արևելահայաց, մասում պատկերված ԿԱԿԱՋԸ ներկայացնում է Օտտավա քաղաքը և հարգանք է այն քաղաքի նկատմամբ, որ տեղակայված է այս հուշակորողը: Մինաւոյն ժամանակ, այն խորհրդանշում է Կանադայի հայ հանայնքը, քանի որ նաև նրա լավագույն զավակներից մեկի՝ Մայլաք Քարշի, տասնամյակների քարձորարվեստ աշխատանքի շնորհիվ էր, որ կալազն արժանացավ խորհրդանշային ճանաչման: Կակաչը հայ և կանադացի ժողովորդների քարեղեկամորթյան արտիհայտումն է:

Հայաստանն առաջին քրիստոնյա պետությունն է աշխարհում: Որպես առաջին քրիստոնյա պետության զավակներ հայերն անձնազնի նվիրումով են տարել իրենց հավատը դարերի փորձությունների միջով: ԽԱՅՐ

պատկերն ամբողջացնում է հուշակորողի ճակատահայաց մասը: Խաչին առջնիքն քանդակված է խաչաձև ՍՈՒՐԵ: Հավատը եղել է մեր ինքնապաշտպանության սուրբ և ինքնապաշտպանության սուրբ եղել է մեր հավատը: Սուրբ և խաչի հովանությունների մեջ առանձին առնանկներով պատկերված են Հիսուս Քրիստոսը, Մարիամ Աստվածամայրը և Գրիգոր Լուսափորիչը:



Հուշականահայաց մասում ԱՐԱՐԱՏ լեռից իջնող ՆՈՅ ՆԱՀԱՄԵՑՆ է: Նրա պարզած ձեռքում աղավնին է՝ որպես խաղաղության խորհրդանշի և որպես նոր կյանքի սկզբի ավետարեր: Նոյ նահապետի ուժերի մոտ հաստարուն ԿԵՆԱՅ ԾԱՈՆ է, որի արմատները խորանում են դեպի քարակերտ պատմության հիմքերը:

Արմատահայաց մասում տեսանելի է ծնորադիր սրճագահար պատանին հայ ժողովովի ստեղծագործ ոգու, նրա կենսահաստատ ու աշխատաեր էության դրսերումն է: Նրա կորին քանդակված նույը և խաղողի ողկույզը ոչ միայն դարավոր հայկական-քրիստոնեական խորհրդապատկերներ են, այլև միասնական մեկ ընտանիքի, մեկ ամբողջության գաղափար: Նույը ծեղրված է և նրա բազմաթիվ հատիկներ ցիրուցան են եղել: Այդ հատիկները մեր մեծ ընտանիքի աշխարհասփյուռ զավակներն են: Նուան վերը դեռ բաց է:



Հուշակորողի թիկունքին պատկերված է թևատարած ԱՐԾԻՎԸ որպես խորհրդանշի անցյալի մեր փառքերի և որպես վկայությունը մեր ազատաբաղ ոգու: Արծվից թիզ վերև, խուներամ տերևների մեջ, քանդակված է ԹԽԱԿՈՒՏԵՐԾՎԸ որպես Կանադայի խորհրդանշի և ի նշան երախտագիրության այն հոդի նվազմամբ, որի վրա իրենց ապատանն են գտնել հայ ժողովովի բազմահազար զավակները:



Հուշակորողի հեղինակներն են հայստանցի ճանաշ-ված ու պատակաստ քանդակագործ Լևոն Թորմաջանը: Հուշակորողը կառուցվել է Կանադայում Հայաստանի Հանրապետության դեսպանության նախատեսնությամբ և Կանադայի հայ համայնքի բազմաթիվ անհատների ու կազմակերպությունների նվիրատվությունների շնորհիվ: Բնոյր նվիրատունների ամուններն արձանագրված են Հայաստանի Համբապետության դեսպանատանը, ինչպես նաև Եթեղապահնության բանգարանում:

Հուշակորողի բարձրությունը, առանց պատվանդանի, 3 մետր է, իսկ հիմքի շրջագիծն է 5 մետր: Այն կառուցված է Հայաստանի թերված միակտոր նարնջագույն տուֆից և կշռում է գրեթե վեցը տոննա: Հուշակորողը Հայաստանի սահմաններից դուրս միասնոր տուֆից երբեք կառուցված ամենամեծ հուշարձանն է: Այն տնի եռալեզու (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն) բրոնզամույլ արձանագրությունն է:

Հուշակորողի բացումը կատարվեց սեպտեմբերի 21-ին հայոց եկեղեցեն, համայնքի և կանադահայութեան և դեսպանության անձնակազմի և ԶԼՄ-ների մասնակցությամբ:

Чиновники Орловской

Օգոստոսի 31-ը զորավար Անդրանիկի հավերժության օրն էր

Քանի կա հայ ժողովուրդը՝
Անդրանիկը անմահ է...
Մարշալ Քաղրամյան

1927 թ. օգոստոսի 31-ին հեռավոր Ամերիկայի Ֆրեզն քաղաքի ջրոն առողջարանում իր երկրային կյանքին հրաժեշտ տվեց հարկադրյալ տարագրության մեջ գտնվող «Արարատի նման վեհ եւ նրա գագաթի ծյունի նման անբիծ» մեծ հայը՝ Զորավար Անդրանիկը:

Հողվածում չենք ներկայացնելու անզուգական հերոսի 30-ամյա պայքարի տարեգործությունը։ Վերջին տասնամյակում, փառք Աստծո, իրար հետեւից Հայաստանում լոյս տեսան մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ (հեղինակներ՝ մեծ երախտավորներ Անդրանիկ Չելեպյան, Հրայր Սիմոնյան, Համբարձում Կարապետյան, Սողոմոն Սկրտչյան, Ռոբերտ Կարայան), որոնցում համակողմանիորեն վեր է հանված Զորավար Անդրանիկի կյանքի ու գործունեության փառապահ ուժին։

Հայտնի է, որ զորավարը պատգամել էր ճոխ թաղում չկատարել, իրեն ընդունել որպես ազգի համեստ մի գինովորի, սակայն հայտնի է, որ թե Ֆրեզնոյուն և թե Փարիզուն, իսկ հետագայում առավել են հայրենիքուն ինչպես զորավարին հավերժության ճանապարհեցին համաժողովրդական եւ պետական ամենաբարձր մեծարանը:

Այն ժողովուրդը, որը հարգել գիտի իր հերոսներին, անմահ է:

Այժմ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի հարթականությամբ մի քանի ամիս է, որ ընթանում են շինարարական աշխատանքներ, փորձիկ հուշարձից տեղեկանում ենք, որ կառուցվում է հուշակորոպ՝ նվիրված Զորավար Անդրանիկին:

Այսպիսով իրականանում է «Օդրավար Անդրանիկի» Հայոց համազգային միության եւս մեկ ծրագիրը՝ շնորհիվ Հայաստանի պաշտպանության նախարարության ջանքերի եւ հյութական աջակցության, ինչպես նաև ամերիկաբնակ մեր հայրենակից, արմատներով վանեցի, եղեռնից փրկված ծնողների զավակ Վահրամ Շիրինյանի 75000 դրամ նվիրատվության:

Հեռու չեն այն օրը, եթի ազգովին կտեսնենք կարուցվող թանգարաննապատվանդանի վրա վեր խոյացած հերոսի հոլշարձանը (հեղինակ՝ տաղանապիր քանդակագործ Արա Շիրազ, ճարտարապետ՝ անվանի փարպետ Ազան Մխիթարյան):



Հուշարձանը ծովովում է բրոնզից, շուրջ 9 մետր
բարձրությամբ, տեղադրվելու է գրեթե նոյն բարձրության,
բրզանելի, գրանիտի պատվանդանի վրա:

Արձանը պատկերում է Զորավար Անդրանիկին վեհաշոր, հաղթ բազկի մեջ արդարության սուրբ վեր պարզած, ասպանակներով հեծյալի տակ ծառս եկող գույզ նժոյնգներին զապած: Գալիքի հավատով...

Հողվածի շրջանակից առայժմ դուրս են քողնում նաև շինարարեանվոր Քարպետներին. շինարարության ղեկավարության Ավիրական աշխատանքը. խորս այն մասին էլ չի լինելու, թե ինչ բարդ եւ դժվարին գործ են կատարում հայրենիքում մի քանի հոգի մնացած արձանագործ Քարպետները, որոնք, ինչպես եւ շինարարները, իրենց ղեկավարների՝ Խոր Սիրողյանի, Լեւոն Ակրտչյանի անմիջական մասնակցությամբ եւ Արա Շիրազի ու Ազգան Սիսիթարյանի մշտական ուշադրությամբ ձգտում են նշված Ժամկետին ավարտել կառույցը:

Հաճախ եմ այցելում շինարարներին և այժմ ցանկանում եմ ընթերցողներին հայտնել ուրախություն՝ կապված շինարարության շորջ ժողովրդական հարգանքի դրսեւորման մի երեւույթի հետ:

Նախ՝ հաճախ են թարմ ծաղկներ դրվում շինարարությունն ավետող հուչաքարի վխա: Քիչ չեն դեպքերը, երբ ահել ու ջահել քաղաքացիներ մոտենամ են բանվորներին եւ տեղեկանայով, թե ինչ է կառուցվում, տեղնուտեղը խնդրում են բահ ու բրիչ եւ իրենց քրտինքով հարգանքի տուրք են տալիս ազգի պաշտպան հերոսի հիշատակին:

Սահ նրանցից մեկի՝ Սեծ հայրենականի մասնակից, դարսեցու արձատներով, գյումբեցի Կորյուն Ամիրխան-յանի հետ զրոյցից մասին պիտի պատմեմ:

Հարցիս, թե՝ Կորյուն պապ, ի՞նչը դրեց քեզ բահ վերցնել, նա ասաց. «Քա ողջ կյանքում ազգի համար արյուն, ըրտինք բափած Անդրանիկի համար մի կարի քրտի՞նք է չբափենք, եւ ավելացրեց, բա լավ չէ՞ր լինի, որ մի կնքված արկու էլ լիներ եւ ամեն մարդ իր հենա-րափորտայան սահմաններում դրամական նվիրատ-վուրյուն կատարեր շինարարությանը նպաստելու՝ թեկուզ բանվորների ընդմիջնան համար, դա բարյուականություն է, դաստիարակություն, ապա մտածերով շարունակեց, ծխողներս մի օր չծխենք եւ դրամը արկող զցենք. Հրանտը չի աղքատանա, երեխները մի պաղպաղակ որ չտուն, Թամարը չի տուժի, էլի՛ ասեմ... Հրամեշտին ավելացրեց, որ Անդրանիկը հայ ազգի սուրբ փրկիչն է, եւ ազգովին պիտի կառուցվի նրա հուշարձանը: Ծիշտը դա կիներ, կազմակերպել է պետք: Եւ ճիշտ կինին նաև, որ հայոց եկեղեցին ազգի հերոսին հայոց սրբերի շարքին դասի հենա հուշարձանի բազման օռ:

Համաձայն եմ քեզ հետ, կարսեցի Սկրտչի որդի գյումրեցի Կորյուն, մեծ զրավարի անրիծ կերպարը քննություն է քննել հայոց ազատազրական պայքարի տարեգործության մեջ եւ ախոք է որ հերոսի (իմբն՝ միայն Անդրանիկի) հիշատակին նվիրված յուրաքանչյուր խոշոր միջոցառում արձագանք ստանա ամեն մի հայի սրտում, առաջնորդվի պետական ամենաբարձր աստյանների կողմից, որպեսզի կայանա համագային հավաքական ջանքեր առաջացն խնդիրների բարեհաջող լուծմանը նպաստելու համար՝ առանց կուսակցական խորության. հերոսին ծնել է ժողովուրդը, եւ հերոսն իր ժողովրդին է...

ՆՈՐԱՅԻ ՄՈՒԾԵՂՅԱՆ,
«Զորավար Անդրանիկ» ՀՀ միության նախագահ

Ծուշին ավելին է, քան հաղթանակը

Էզեր Խապահականային
օրագրիս

Ծառ. Շահուրդ Բամարից

Զորի Բալայան

Ծուշին կրակակետի մարումից ավելի քիչ, քան մեկ ամիս առաջ, այդ նոյն դժոխային ապրիլի տասին, աղբեջանական տանկերը եւ գրահատեխնիկան խուժեցին հայկական Մարադա գյուղ, ջարդելով ու հրկիզելով բոլոր տները: Մարտական մերենաների դեկերի մոտ նստած էին ԽՍՀՄ-ի նախկին գինվիրները: Դարձյալ այն նոյն չորրորդ բանակի այն նոյն տիսրահոչակ 23էրդ դիվիզիան: Ամբողջ գյուղը միշտակույտերի վերածեցին: Մոտ յոթանատուն մարդու զնդակահարեցին, տասներկու մարդու ողջուող հրկիզեցին, ավելի քան հիսուն. կնոջ ու մանուկների պատանի վերցրին:

Կեսօրին օգնություն եկավ: Մարտական ծանր տեխնիկան, դժոխ ստեղծելով, վերադարձել էր իր բազան: Մարտայում մնացել էին դիակապուտները, որ դիմադրության կամ հակագրուի չէին սպասում: Մի քանի տասնյակ արիեստավարժ կողոպատիշներ պառկեցին ուրիշի իրերով լրված պարկերի կողքին: Հրաշքով փրկված մարտացիները, լսելով գյուղի ազատագրման լուրը, վերադարձան սուս: Մեռածներին թաղեցին նոյն օրվա երեկոյան: Հաջորդ օրը բարոնուի Քոքսի գլխավորությամբ «Միջազգային քրիստոնեական համերաշխության» մի մեծ խմբի հետ մենք զնացինք Մարադա: Քոքսի խմբում Քհ-Քհ-Սի-ի մի հեռուստալրագրող կար, որ նկարահանեց մարդկանց ածխացած մարմինները: Մի քանի դիակներ գիտաված էին: Այդ կադրերը ցուցարդվեցին եւ Լոնդոնում, եւ Ժնևում, եւ ուստական «Վեստի» ծրագրով ապրիլին: Խսկ այդ նոյն ժամանակ Ծուշին եւ Արդամի կրակակետերը շարունակում էին զնդակուել Ստեփանակերտն ու նրա շրջակայքը: Աշխարհը լուս էր: Հարունակեց լրել նոյնին Մարտայի սարսափելի կադրերը տեսնելուց հետո:

Մարտայի ողբերգությունից ուղիղ երկու օր հետո ողջ Ստեփանակերտը տեսավ, թե առավոտից երեկո ինչպես էին ծիսի քուլաները բարձրանում հայկական Ծոյ գյուղի տարածքից, որն ամենահարմար թիրախն էր Ծուշին

բոլոր կրակակետերի համար: «Բոլոր»: Այս, դրանք շատ էին: Ծուշին ազատագրումից հետո մենք հաշվեցինք շուրջ քառասուն սարքավորված հարթակներ, այդ թվում նաև բետոնապատ, ծածկված տարբեր տրամաչափի պարկուճներով:

«Քրիստոնեական համերաշխության» այդ նոյն խմբի հետ մենք մեկնեցինք Ծոյ: Այս անգամ մեզ հետ էր Ալեքսեյ Սեմյոնովը՝ Անդրեյ Սախարով և Ելենա Բոներ ամուսինների որդին: Սեկանս էինք ուազիկով՝ խորիդային ջիպով: Ծնկահար ցեխ էր: Ամբողջ ճանապարհին լսվում էին «Գրադի» համազարկերը: Ծուշից խփում էին Քարաշենին եւ Ծոյին: Մտտենալով գյուղին, տեսանք ամենուրեք ցեխի մեջ սփոված սպանված կովեր, ոչխարներ, ավանակներ: Ծոյը հին գյուղ է, որը գովերգել է Լեռնիդ Հուրունը իր «Խմ սիրելի Ծուշիթենը» գրքում: Անվայր մնացած ոչ մի տուն չկար: Բնակիչներին գրեթե բոլորին դուրս էին բերել: Նրանք տեղավորվել էին Ստեփանակերտի նկուղներում, հարազատների մոտ: Գյուղում մնացել էր միայն ինքնապաշտպանության մի ոչ մեծ ջոկատ, որի հրամանատարն էր Ազգ Հարությունյանը: Մի քանի կիսավեր գոմերում ապաստանել էին գյուղը լեկուց հրաժարված ծերունիներ ու պառավներ: Մի քանի մտով անցնելիս այգում հավաքված մարդկանց տեսանքը: Խաղող էր: Սահացել էր, ավելի ճիշտ, «Գրադի» բեկորից զնիվել էր Ծոյի ամենատարեց կինը՝ Նուրաք Սիմոնյանը: Քանի որ գյուղի գերեզմանոցը բլրի գագարին էր, իսկ այնտեղ անընթեշ ոմբակոծվում էր, որոշել էին նրան բաղել տան բակում: Լեռի Ջոքը և Ալյոշա Սեմյոնովն առաջարկեցին մասնակցել բաղմանը: Ահա գրառումը, որ կատարել եմ այն ժամանակ Ծոյում. «Նուրաք Սիմոնյան: Հարյուր հինգ տարեկան: Բեկորը կաել է կրծքին: Սիանգամից չի մեռել: Գիտակցությունը տեղն է եղել: Հայաստանի հեռուստափառլուները պետք է որ լավ հիշեն այդ փոքրիկ, ցամաքած, թթի չիր դարձած զառացյալ կնոջը: Եկվոր հեռուստալրագրուները նկարահանել ու քանից ցուցարդել են նրան: Հարազատները պատմում էին, որ կենաչանի ժայխոր սառել էր նրա մոմագույն դեմքին: Հազիվ շունչ առնելով, պատմում էր որդու եւ բոռան մասին, որ ամխուկես առաջ զնիվել էին Քարինտակի մոտ: Արդեն մարելով, նա շարունակում էր ժապաւակ: Դեմքը խաղաղ էր, ասես ցուցարդաբար արհամարհում էր կրծքի ցավը: Ժայտալով նայում էր իր բազմաթիվ բռնմերին ու ծոռներին, որ ավտոմատները ձեռքերին շարվել էին նրա շորջը: Նա չէր անհանգուտում իր ավերված գյուղի համար, որը երբեք չը լեկ էր հարյուր հինգ տարիների ընթացքում: Նուրաք տատիկը զիտեր, որ տունը միշտ էլ կարենի է շինել, կարենոր է, որ հողը ազատ լինի: Փոքրիկ ու թեթեւ մարմինը ամփոփեցին հակատանկային արկերի կանաչ արկին տախտակներից հապշտապ շինված դագաղում: Հանգույցալին հենց հողին հանձնելու պահին գյուղով մեկ տարածվեց պայթյունների դրիբը: Չնայած ցեխին ու ջրափուերին, դանդաղ մաղող անձրենին, չոր հողի ամպեր բարձրացան օդը»:

Դա 1992 թվականի ապրիլի 12-ին էր: Նուրաք Սիմոնյանի բաղումից հետո՝ դեռ քասան օր շարունակվում

Ծովիք

Եր հիմնահատակ արված գյուղի ոճքահարումը բազմաթիվ կրակակետերից: Ամբողջ աշխարհը, այդ թվում նաև ՍԱԿ-ը, նրա դրստր հիմնարկությունները, ՍԱԿ-ի անվտանգության խորհուրդը, ժնելյան եւ Հաագայի կոնվենցիաները գտնում են, որ խաղաղ քնակչության դեմ ուղղված ամեն մի կրակակետ անհրաժեշտ է մարել հնարավոր բոլոր միջոցներով: Միայն արքեթօնական իշխանություններն են, որ արհամարելով Ծովիքի արձակ-ված չարաղետ «Գրադի» տարածած մահր կրակակետերի վերացումը համարում են... «օկուպացիա»:

Աստված իմ, ցավալիորեն հարազատ Ծովիքն, որտեղ դարեր շարունակ հողին են հանձնվել իմ տասնյակ, եթե ոչ հարյուրափոր, եթե ոչ հազարափոր հարազատները, դաքել է քաղաքակերեց, կրակակետ, որ մահ է սփոռու հայերի վրա: Ամեն մի բարձունք ու բումբ, ամեն մի հարրակ, ամեն պատուհան վերածվել է երկարատև կրակակետի: Գարնանային ապրիլը, որ ներառում էր իննաւոներկուսի երեսուն դժոխային գիշեր ու ցերեկ, պարտավորեցնում էր մեզ ոչնչացնել մահվան հրեշտավոր ակունքը: Ապրիլի վերջին օրերին ես արդեն գիշերում էի միայն շտարում. Կոմանդոսի հարեւան սենյակում: Եվ ոչ մի բայե չեմ բաժանվում իմ ծոցատերից: Նկատել էի, որ Արկադիի սեղանին նույնպես միշտ բաց է մոնլաքե կազմով հաստ տեսքը: Նա պարբերաբար գրառումներ էր կատարում, նշում թվեր, աշխարհագրական անուններ, բվականներ: Մի անգամ, չքացցնելով տարակուսանքս, հարցիր: «Գրողը տանի, ես արդեն խառնում եմ օպերացիան սկսելու օրը: Ասա, վերջապես ե՞րբ ենք զնում Ծովիքի վրա»: Արկադին լոեց, մի փոքր կենտրոնացավ, լրջացավ եւ արագեարագ ասաց. «Հարցադրումը միշտ չէ, կոմիսար: Ինձ պետք է ուրիշ բան հարցնել: Այն մասին, թե ինչ, ինչից եւ որքան է հարկավոր Ծովիքն գրավելու համար: Այդ ժամանակ ես կպատասխանեմ, նայելով ծոցատերին. ինձ հարկավոր է չորս հարյուր տոննա վառելանյուր, ամենաքիչը հազար «Գրադ» հրթիո: Այնուհետեւ կարող եմ գիտիդ թափել թվեր, բվականներ, գումարելիներ, այդ թվում նաև կենդանի ուժի եւ հացի. կապի միջոցների: Բուկ այդ ամենը կարելի է տեղափոխել միայն օդով՝ ՄԴ-8-երով եւ ՅԱԿ-40-ներով, որոնք իրենց որովայնի մեջ տեղափոխում են 213 տոննայից ոչ ավելի: Եվ թշում են միայն լավ եղանակին ու դեռ շատ էլ խոցելի են: Այնպես որ, ժամկետի մասին պետք է հարցնել ուղղարիխավարների հրամանատար Սերգեյ Վանցյանին: Նրանցից՝ այդ օդայուներից է կախված ամեն ինչ: Ինձ մոտ այդ ամենը գրված է բացարձակ թվերով ու տոկոսներով: Եվ այն, թե որքան վիրակապանյութեր են հարկավոր վիրավորների համար, որքան արյան փոխարինող նյութեր, ցավազրկող միջոցներ: Ու այդ ամենը նոյնայս օդով պետք է տեղափոխվի: Բոլորին պետք է ոսորի հանել: Ամբողջ սփյուռքին, ամբողջ հայուրյանը: Այ, երբ ծոցատերին բոլոր տողերի դիմաց թշնակներ կլնեմ, այն ժամանակ թեզ կիայտնեմ ճշգրիտ օրը»:

Չեմ կարծում, որ Կոմանդոսին հաջողվեց ծոցատերում դնել բոլոր թշնակները: Բայց համոզված կասեմ, որ այն ժամանակ «Էրեբունի» օդանավակայանում գիշերցերեկ աշխատում էին կյանքի թելադրանքով ստեղծված «Արցախ» հայրենակցություն» հասարակական կազմակերպության ակտիվիստները, հարյուրավոր երեւանցիներ, որ զբաղվում էին ոչ միայն տակառատարանների ու վառելանյութի հարցերով, այլև՝ բեռնման ու բեռնաթափման: Ժամանակին տեղ հասան բուժանյութերը, որը բերեցին «Քրիստոնեական համերաշխության» ներկայացուցիչները. «Ալինկո» կապի միջոցները, որ նշանակված միշտ ժամկետին տեղ հասցրեց լուսնելեսցի բժիշկ Վարդգես Նաջարյանը, որին օգնում էր Գուրգեն Մելիքյանը: Չե որ ծոցատերին մեջ գրի եմ առնում միայն այն, ինչ իմացել ու տեսել եմ սեփական աշքերով, կամ այն, ինչ սեփական ուժերով կարողացել եմ կազմակերպել ինքը: Բայց չե որ պատահում էր, որ շարաթական երկուսերեք անգամ Երեւան էին թշում Ռոբերտ Ոռերտուն ու Սերգը, կամ գալիս էին Վազգեն Սարգսյանը, դաշնակցության ակտիվիստներն ու որիշ շատերը:

Ամեն օր Կոմանդոսի նշանակած ժամին շտարում հավաքվում էին իրենց ուղղության կամ, ինչպես գիշավոր հրամանատարն էր ասում, քարտեզի պարի համար պատասխանատու հրամանատարները: Քննարկում էին բոլոր ուղղությունների գրքողությունների մանրամասները: Տեսնել էր պետք, թե շտարի տարածքում ինչպես էին գրուցում Արկադի Տեր-Թաղեւոյանն ու Մոնիք Մելքոնյանը (Ավոն): Արկադին ջանում էր հայերեն խոսել այնպես, որ հասկանալի լինի Ավոնին: Բուկ վերջինս ավելի արյունավետ շփումների համար տվորել էր գեներերի, ուղամաքերքի ու փոխադրամիջոցների անունները ուսուերեն:

Մի քանի երեկո շարունակ բոլոր հրամանատարները հավաքվում էին շտարում օպերատիվ քարտեզի շուրջ: Քննարկում էին գրքողություններով: Տեսնել էր պետք, թե ինչպես էին ձայները գլուխները գցած իրար հետ վիճում Սամվել Քարայանն ու Վակերի Բայալյանը: Տեսնել էր պետք, թե որքան հանգիստ ու հստակ էր բացատրում խնդիրները գեներալ Գուրգեն Դալիկալթայանը: Տեսնել ու լսել էր պետք, թե ըննարկումները ինչպես էր անփոփում Կոմանդորը:

Վերջապես երկու անգամ եղանակի պատճառով ժամկետու փոփոխելուց հետո հայտնվեց վերջնական օրը. «իննստուներկու թվականի մայիսի յորի գիշերվա լույս ուրի երկուսն անց երեսուն բույեն»:

Մայիսի յորի երեկոյան, ժամը վեցին ես մի յորօրինակ անակնելական կազմակերպեցի բոլոր նրանց համար, ովքեր գտնվում էին շտարում, պատրաստվելով, որ կեսիշերին գնան հրամանատարական կետ, որտեղից իրականացվելու էր օպերացիայի դեկապարում:

Ծովիք

Խնդրեցի Կոմանդոսին շտաբի բակում շարք կանգնեցնել բոլոր նրանց, ովքեր նրա եւ գեներալ Դավիթալքայանի հետ գտնվելու են կողք-կողքի հրամանատարական կետում: Ուղիղ տասնյոթն անց հիսունինգ բռպեին մեր առջեւ հայտնվեց՝ իր եպիսկոպոսական ամբողջ հանդերձանքով Արքային թեմի առաջնորդ Պարզեւ Մարտիրոսյանը: Նա օրինեց օվերացիայի սկիզբը: Մի սրտաճմլիկ հպարտ հուզմունք համակեց մեզ բոլորին այն գիտակցությունից, որ շոշափելի ու իրական նաևնակիցն ենք պատմական մի պահի. որում արտահայտվում էր հենց այն հավատն ու հաղթանակի պարտավորվածությունը: Կոմանդոսը երդվեց, որ մենք Աստծո կամք կկատարենք մեր ժողովրդի հրամանը:

Ուղիղ կեսօփիշերին շուրջ տասը մեքենա ճանապարհ ընկան: Ես գեներալ Դավիթալքայանի հետ գտնվում էի քողարկված «Նիվայում»: Բոլոր լուսարձակներն անջատված էին: Միայն առաջին մեքենայի փոքրիկ լապտերներն էին նշողվում: Մենք քաջ գիտեինք, որ Շուշիի բոլոր կրակակետերից հրաշալի երեւում է նոյնիսկ հեռավոր քառասուն վատանցո լապտերի լույսը:

Կես ժամում հասանք հրամանատարական կետ:

Ճարումակելի

Յայոց ցեղասպանության ռազմավարական հետեւանքները

անջատևանջատ ճգնել իրենց ընտանիքների տար-
րական ֆիզիկական գոյությունն ապահովելու համար:

Շոգեբանական վճարվածք

Սկիզբը նախորդ համարում

Հայաստանի նահանգներն ու գավառները սույ տարածք չեն, այլ իինքիազարայի կենսատարածք ու հայրենիք: Յեղասպանության առաջին ահավոր հետեւանքն այն է, որ հայրենին օտարացրել եւ անջատել են իրենց կենսատարածքից: Ռազմավարական առումով՝ կենսատարածքի կորուստը գրկել է հայրենի պաշտպանական մի քանի շրջան ունենալու նախլին հնարավորությունից. մնացել է մի բուռ Հայաստան՝ ընդամենը մի վերջին միայնակ ամրոց: Նա այլեւս նահանջելու, ուժերը վերախմբավորելու տեղ չունի: Հայաստանն այլեւս ռազմական ոչ մի պարտության իրավունք չունի: Այլավես՝ դա կին Հայաստանի ու, հետեւարար, հայ ազգի վերջը:

Մշակութային կորուստներ

Անրիվ եւ անհամար են մեր մշակութային կորուստները: Դրանք ոչ միայն առանձին ու անջատ եկեղեցներ են, ճարտարապետական գանազան անկրկնելի շինություններ ու կորողներ, այլև՝ իին հազար տարվա ընթացքում այդ հոդի վրա ստեղծված ամրոցներ, քաղաքներ ու գյուղեր, այլև՝ տասնյակ հազարավոր մատյաններ, որոնցում ամփոփված է եղել ժողովրդի հանճարն ու գիտելիքը: Միայն մեկ խոսուն փաստ. այսօր ամբողջ աշխարհում կա մոտավորապես այնքան հայրենն ձեռագիր մատյան, որքան ոչնչացվել է Եղեռնի ժամանակ: Անզին տեղեկություններ ու գաղտնիքներ են ոչնչացվել, կորեկնացել, մեզ գրկելով մեր նախնիների ստեղծած հոգեւոր ժառանգությունից, մեզ կտրելով նրանց մորից ու ողուց:

Նյութական կորուստներ

Յեղասպանության ենթարկված արեւմտահայության ամբողջ ունեցվածքի եւ գույքի բռնագրավումն ու քաղաքական ստիճան պետք է կարապան գանգվածներին տասնամյակներ շարունակ գրադարձ ոչ թե ազգային հավաքական կյանքը հարստացնող եւ ամրապնդող ստեղծագործ աշխատանքով, այլ շարքաշորեն,

Հոգեբանական առումով՝ կենսատարածքի կո-
րուստը գրկել է հայրենին բնական ու ձեռակերտ
ազգային խորհրդանշական հետ ամենօրյա շփումից,
դրանով իսկ վերացնելով հայ ազգի բնականու
հոգեւոր զարգացման հնարավորությունը: Միաժա-
մանակ՝ ցեղասպանությունը շատ հայրենի մեջ
առաջացրել է թերարժեքության բարդույթներ, ազգի
ապագայի նկատմամբ թերահավատություն, որոշ
դեպքերում նոյնիսկ ինքնատյացություն՝ ազգային
շահերի եւ արժեքների մերժում եւ օտարազարություն:

Ժողովրդի՝ կազմակերպված համայնքների, կա-
ռույցների եւ դեկավարության ոչնչացում

Հայոց ցեղասպանության ընթացքում ոչնչացվեցին
ոչ թե սույ մարդկային զանգվածներ, այլ ժողովուրդ,
որը համախմբված եւ կազմակերպված էր իր դարավոր
կառույցների շուրջը: Ոչնչացվեցին համայնքները,
եկեղեցները, դպրոցները, բազմաթիվ ու զանազան
հայկական կառույցներն ու կազմակերպությունները,
վերջապես՝ հայ ազգի դեկավարությունը, ներառյալ՝
քաղաքական, մտավորական ու մշակութային ընտ-
րանին: Մարդկային զանգվածներն առանց իրենց
համախմբող կառույցների այլեւս ժողովուրդ չեն, այլ
անհատներ: Յեղասպանությունից հետո աշխարհով
մեկ ցրվելով, սփյուռքահայության ընդամենը մի փոքր
հատվածը կարողացավ վերահանախմբվել ազգային
նորաստեղծ կառույցների շուրջը: Արտերկրում
ապաստանած հայության մյուս մասը ներգրավվեց
օտար կառույցների մեջ եւ աստիճանաբար ձուլման
ենթարկվեց: Խորհրդային Հայաստանում հայությունը
նոյնավես կազմակերպվեց ոչնազգային կառույցների
եւ զաղափարախոսության շուրջը եւ մշակութային
զգայի չափով ապահայացավ (հատկապես քաղա-
քական եւ մտավորական վերնախավը):

Հայկական ավանդական կառույցների ոչնչացումն
այն կարեւոր օրինական գործոններից էր, որ թույլ
չտվեց օտարության մեջ հայտնված հայության
թեկորներին կազմակերպվել սփյուռքը միավորող մեկ
միասնական կառույցի մեջ:

Մարդկային կորուստներ (20-րդ դարում հայության
մարդկային կորուստները)

Հասկանալու համար հայությանն այսօր հետա-
պեսնորդ խնդիրները, անհրաժեշտ է նաև պարզորեն

Upphovtruli

պատկերացնել ոչ միայն Անձ եղեննի, այլև վերջին հարյուրամյակում մեզ պատուհասած շարունակական աղետների ահավոր հետեւանքները: Այդ աղետների պատճառած մարդկային կորուստներն ազբէ են ոչ միայն մեր ազգի քանակի, այլև նրա հավաքական որակի վրա (մասնավորապես՝ հայ զանգվածների մեջ արմատափորելով այսպես կոչված «վերապրելու հոգեքանությունը») անհատի համար իր եւ ընտանիքի անձնական շահի ամեն ինչից վեր դասումքը):

1894 թ. մինչեւ 1922 թ.՝ շորս փոլով իրագործված հայկական ցեղասպանությունը, բնաշնչելով հայկական քաղաքակրթությունն իր բնիկ տարածքի մեծ մասից, խլեց ավելի քան 2.000.000 հայերի կյանք (շուրջ 300.000 հայ ոչնչացվեց 1894-96 թթ., 30.000-1909 թ., 1.5 միլիոն՝ 1915-16 թթ., շուրջ 300.000-1918-1922 թթ.):

1920-1921 թթ. Արեւելյան Հայաստանի կենտրոնական մասում հոչակված Հայկական խորհրդային փոքրիկ հանրապետությունը, վայելելով հարաբերական խաղաղության եւ կայունության 70ևամյա միջքան՝ կարողացավ արձանագրել տնտեսական-մշակութային լուրջ առաջընթաց: Բայց, ի հավելումն ցեղասպանության պատճառած մարդկային կորուստների, հայերը մեծ զոհեր տվեցին նաև Խորհրդային Հայաստանում. 1920-21 թթ. ոչնչացվեց անկախության շրջանում ազգային ողով կոփված գրեթե ողջ հայ սպայակազմը, իսկ 1930ևական թթ. բոլշևիկյան խափարամուլության զոհ գնաց հայ մասավորականության ծաղիկը՝ հազարավոր շարքային քաղաքացիների հետ: 1941-1945 թթ. պատերազմին մասնակցություն բերած շուրջ 600000 հայորդիներից զոփվեց շուրջ 300 հազարը: Պատկերացնելու համար, թե սա ինչ ահավոր թիվ է փոքրաքանակ հայ ազգի համար, բավական է ասել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմուն Ամերիկայի Միացյալ Նահանգները եւ Մեծ Բրիտանիան տվել են գրեթե ծիշտ նոյնքան սպանված՝ համապատասխանարար 291.557 ու 357.116 զինվոր:

1949 թ. Հայաստանից կազմակերպված բռնագաղթը հազարամբ նոր զոհերի պատճառ դարձավ: Կայուն ու տնտեսական զարգացման աննախադեպ քարենապատ ժամանակահատված էին 1954-ից մինչեւ 1988 թ. ընկած տարիները: Սակայն սկսած 1988 թ.՝ Հայաստանի այս վերջին բեկորում հայ ազգի գոյատեսումը դարձյալ հարցականի տակ առնվեց. 1988 թ. Սպիտակի երկրաշարժը խեց 25-30 հազար կյանք եւ ամբողջությանը ավերեց Հայաստանի մոտ մեկ երրորդը, ներառյալ Երևանից հետո ամենամեծ հայկական քաղաքները՝ Գյումրին ու Վանաձորը: Դրան հետեւած դարաբաղյան պատերազմում զոհվեցին եւս շորո մեկ տասնյակ հազար հայեր: Այս ամենին ուղեկցած արտագաղթը, որը կանգ չի առել ու

շարունակվում է, Հայաստանից արդեն տարել է 1-1.5 միլիոն մարդ:

Յավոր, ցեղասպանությանը հետևեց մի
երկրաբանի շրջան որի ընթացքում հայուրաց
սարգավայրում ներփակվեցած գաղտնահիմն թանձնիրան նաև ալպու
ի կայունությունը և համաշխառ են ամպադի վարությունը և արդի մասին:
Առաջնա համապատասխան են իրենց լուած համարի վեհականությանը և այս մասին:
Հայաստանը սկսած է առաջնա պատճենաբարյան ձեւ չէր
(որքան էլ փորձու դրսա այսպիսի գործառույթներ
սերազրել), այլ նզգային այդժեքներին ու
հապատակներին խորը, գաղտակարապես գաղու-
թացված սկսած պատճենաբարյան մեր առաջնորդությունը էր,
եղորագոյն կարագությունը և այս ստորև նշանաբար իր
մասկութափական հետաքանակ գործառույթունը կուսակ-
ցական նշանակութափական մասնակիությունը և նորիդա-
յուն հայությունը և վիճակի չեղ ու բարձ և կոչքած չեղ
հայութագործելու կամ արականական մշտական մեջ նշանակած երը,
Երկրագործական առողջեւությունը և կոչքական Սերոժիկ
տարածքներու մեջ առաջնա պատճենաբարյան և շուրջ օպերա-
տուրագործական առաջնա պատճենաբարյան մեջ վերականգնության
և այդ պատճենաբարյան առաջնա պատճենաբարյան մեջ վերականգնության
հայ ազգի անվտանգ զարգացույթը Խորիդային
և այսպրույն հնարավոր փոլոզման դեպքում: Չուծեցի
է չէր թուրքի լուսապատճենա պատճենա առաջնա պատճենա պատճենա
շաբանագության ուժարական հնաւագական առաջնա պատճենա պատճենա
մշտական ընթացող ու այժմ էլ ավելի արագացած
ձուլումը՝ «ապիտակ ջարդը»:

Ազգային իրավունքների վերականգնման ուղղությամբ հնարավոր եղավ կազմակերպված պայքարի դիմել շատ ավելի ուշ՝ միայն 1960-ական թթ. սկսած։ Ժամանակի այդ կորուստը եւս թանկ նատեց. այդ ընթացքում տասնյակ հազարավոր հայեր զոհ գնացին սպիտակ ջարդին. իսկ թշնամին էլ ավելի ամրապնդեց իր նվաճած դիրքերը։

Ծատ բնական ու հասկանալի է, որ այսպիսի աներեւակայելի տարածքային, հոգեւոր, մշակութային, նյութական ու մարդկային կորուստները պետք է ազդեցին նաև ազգի ընդհանուր մտավոր ու բարոյական ներուժի վրա: Սակայն հենց այս նույն ցավականի փաստերը մեզ պետք է նաև ուժ ու հավատ ներշնչեն, որովհետև, թերեւս ոչ մի ազգ չէր դիմանա այսպիսի հարվածների եւ բարի բուն խնասողվ կանինետանար աշխարհի երեսից: Ուրեմն մեր ազգն ունի նաև անօրինակ տոկունություն եւ ապրելու կամք, որը եւ պետք է շուտափույթ գործի դմել՝ ի հեճուկս պարտվողականություն, երբեմն էլ՝ անկախությունից կամովին հրաժարում քարոզող բոլոր ուժերի եւ տրամադրությունների:

ԱՐՄԵՆ ԱՅՎԱՋՅԱՆ

Անդրեաս

Ցաւակցական

Այսու մեր խորին վշտակցութիւնն ենք յայտնում Պլճ.
Վաչիկ Վարդանեանին և բոլոր պարագաներին իրենց
հօր՝ հանգուցեալ

Uppnus til huytippu

ê. ÄêÎ²Ü, ²ðÚ²Ü, ¶. ï ²Ð²ÜÚ²Ü

Աշխարհում ինչի՝ համար են սիրում հայերին

"Estat present de l'Armenie, tant pour le temporel que pour le spirituel, Paris, 1694, § 6:

2. ð³ ûñá³ ßë³ ññç ßí³ . áðý ù³ ñ¹çí³ »ý:
 äññ í aÜ , Á í àòòd Üº ùàò ÞÍ7-18-ñ¹ 1³ ñ»ñþ
 üñ³ ÿéç³ óç · çí ÿ³ î³ ý

Relation d'un voyage, t. 1-2, Paris, 1717, § 389:

ØaÚi °éøAà /1699-1755/
üñ³ Ÿéç³ óç · náð, - ñéçéä÷³, çñ³ 1³ µ³ Ÿ
"Í fí ñðæññéð, Í ñðæññéðé ì ñññi á, Í ñññéð, 1956, nö. 204-205"

4. Đ³ Ù̄ñ̄ç Ù̄ç »ñ̄ ÍßéáðÙ ḷ Çýä-án 3 é³ ÝÓÝ³ Ñ³ i áóí
 µýáðÁÇ 3 é»ñ̄ ñ̄³ Í³ Ý á. ÇÝ, Çéł eí aóð ãYñ³ Ýu^{1/4}³ Ói áóð
 »Ý ÷ áÉ³ Ý³ IáðÁÙ³ Ùµ⁴ áí uáí ×³ Ý³ á³ ñ̄-ñáñ¹ »Íá
 áÇÝ³ eí 3 Ý³ eí³ ÑÙ³ ÝCó ÚçÝ³ ¶ÍçÝ³ Í³ Ý 3 ÷ Ç I áñéá
 Ññ³ Ý¹³ ÁY. 13 í³ ÚðÙ ḷ 3 é³ ÝÓÝ³ Ñ³ i áóí Í³. áóðÁ
 3 Ú³ µÝ³ Í³ Ý »ð 3 BÉ³ I³ è»ñ̄ Ááðáí ñ̄íç, áñÝ³ ÝóÝáðÙ
 ï³ Ù³ Ù³ Ù³ ÚµáðC ĐçÝ³ BÉ³ ñ̄ñáññùðéçé-³ ñ̄»ñ̄ ëíçó¹ »áç
 Ñ³ ñ̄³ í³ ñ̄»ñ̄ ðÙ»ñ̄ ù, »ð Í³ ñ̄ð³ ÝáðÙ ḷ eëçñ³ ëçñ
 ÁÝ¹ áóý»ÍáðÁúñ̄. i Ý»Éµáðáñ Ááðáí ñ̄íÝ»ñ̄ç Ù̄ç, áñáÝó Ùáí
 ÍçÝáðÙ õ...

ÆØ² ÜâôÆÈ Í² ÜÍ /1724-1804/
¶»ñÙ³ Ý³ óÇ ÷ ÇÍÇéá÷³, . ÇÍ Ý³ I³ Ý

/Êí íò, Ñî÷éí áí èÿ, ó. 6, Ì îñêâà, 1966, ñò. 572-573/

5. Í 3 ½ ½ ÍÝ»ñÝ ÇÝÓ 3 ñÁÝ³ óñÇÝ Íæœ³ þ³ óÇÝ... áñœé »Í³
í ñ³ ÝÇó³³ 3 3 í áí Ú³ Ý Ú³ úáõñ û¹ C: 2 ñ»ðÝ ïñ Í³. áðU: æÇÝç
»ñÍ ÝúáðU éeaçí 3 1ÇÝ ïñ i 3 Íæ ðúáðY³ ã³ i, »ñI. ÍÈ³ Ýç
Ùç Éé: Íþe³ ÇÝá Íéé ðþ - Ñ³ ñóníç »ë Ó. »Íæí Ú³ ñÚÇYé:
þ² ñ³ ñ³ i Ý ðþ - Íé»óç ã³ i 3 è È³ ÝÁ: æÝá áðA»ð ð
ñÝåñáðoÝ»ñC Ý»ñ. áñÍ ãðAðñðVÁ: 2 Ýñ³. áñ»Ý Ý³ ðñðU
ðç ðçHç³ Í³ Ý ð»é³ ÝÁ. i »é³ i 3 ã³ ÝÁ, áñ çç»É ïñ Ýñ³
. 3 . 3 ÁÇYí »ñ³ Ýáñá. Ú³ Ý »ð I Ú³ Ýùç ñáðéáí, 1 ñ³ Úçççó
ÁéáðO 3 . é³ i Ý áð 3 ð³ i ÝçYá áñà »ë 1³ i è³ i 3 Ýç »ð
Ñ³ ði áðAðU Ý Éæñññ 1³ ÝçB:

6. ... Øái³ I³ i¹ ÝCó¹ ááñëe¹ »I³ i¹ ÙC¹ N³ Ù¹ »ö Eáéë¹ Éái¹ CÝÓ¹
N¹ »i¹ »I³ I¹ ÁääññU¹ N¹ i¹ a¹ Nñ³ 1Cñ¹ ó¹ CÝÓ¹ Cñ¹ »Yó¹ Ùái¹
µ³ öí¹ n¹ »Éái¹ µ³ I³ I³ YCÝ¹ Ù³ úaññ¹ éáæe¹ »n¹ »Yáí¹. Y³ CÝÓ¹ Y¹ »Ö
3 eí¹ Cx³ YÍ¹ »ñáí¹ I³ n³ 1Cñ¹ i³ Y¹ »ñ¹ ñáñ¹ e¹ »YÙ³ I¹, áññA¹
I³ N³ i³ Ñ¹ I¹ ï¹ ÑCÝ¹ µ³ ½úáóY¹ »ñáí¹ »ö NÝ³ Ù³ B¹ · áñ¹ »ñáí¹:
2 Ùí¹ »Ö¹ Yéi³ I¹ ï¹ ÙC¹ à³ é³ i¹ I³CÝ¹ Yñ³ Ù³ ÙñA¹: Ü³
Ùái¹ »ö³ i¹ »ö¹ N³ Ùþaññ¹ »ö¹ CÙ¹ Ö¹ »éuÁ¹: à¹n¹ CÝ¹ Yñ³ Y¹
à³ i¹ Cñ¹ »ö¹ Iñ³ I¹ i³ é¹ »E¹ »ö¹ ÁÝÄñCù¹ à³ i¹ n³ eí¹ »E¹ »ö¹
N³ Yí¹ »ö¹ Yéi³ »ö¹ C¹ Iñ³ I¹ e³ »é¹ »ö¹ Ü³ »ñé¹ Ùi³ i¹
i³ Yí¹ Cñáç¹ Iñ³ e¹ »n¹ »ö¹ Ùñ³ ÙñA¹ i³ e¹ Ü³ Ü³ ÜC¹ à³ i¹ 3 YC¹:
Üñ³ Yù¹ CÝÓ¹ 3 e³ öCÝ¹, áñ¹ Ü³ »ñ¹ ½áññ¹ »ñ¹ Y³ Eáñ¹ üññA¹
x³ Y³ à³ iñ¹ »Y¹ ÁÝ¹ »E¹ »ö¹ Ü³ »ñáñY¹ x³ Ü³ Ü³ Üñ¹ · i¹ Yí¹ áññ¹ i¹
I³ n³ eçó¹ 25 I³EáñU¹ i¹ N¹ »e³ i¹ áñññA¹ Ü³ Y¹ Iñ³ ... Páññ¹ áí¹
à³ e³ i¹ Á CÝÓ¹ N³ Ü³ n¹ à³ i¹ n³ eí¹ »ö¹ áññE³ n¹ C¹ E³ BÉ³ Ü³ a¹
éáEáí¹, áññ CÝÓ¹ Eáñ³ n³ n³ I³ Y¹ µ³ nññ¹ i³ ná¹ »i¹ áññA¹ Ü³
3 nñ¹ N³ Ü¹ áññA¹ ÜññY¹ ÁÍ³ ó¹...

¼. 3 Éáí, áñ Ÿ³ Ù́Í ë»ñ áó Ñ³ IáðÙ aðÝC ¹»ÁÇ
á³ i »ñ³ ÙÁ, »ë Ýn³ Ý ³ e³ c³ ní»óç CÝÓ Ñ»í Ù»ÍÝ»E
µ³ Ý³ I: Ú³ i »ÓÝáði»ÓÁ Ñ³ Ù³ 0³ Ú»ó... Í »ë Á³ Ù Ñ»í á
»ë Í ³ nëçó ¹áðñé »í³, »ó ² ní»ÙÁ h³ Ù»á»ë CÝ IáðáðÙ CÙ
Ñ³ ÚçÝh³ ³ ní»Ý CÙ IáðÙçÝ Aéäí áí ãðÙ çñ Aáðñu³ I³ Ý
ÝáðÙ Ç 1 ñ³ a Ó»éùçÝ xIáðÝ i »· Á, Ù»çùçÝa E»³ Ýa³ ÉA,
»ñ³ ½»Éáí Aáðñu»ñC »ó»x³ I³ i ³ Ù³ ní C Ù³ èCÝ:


²ÈÓØÈ² Ü ð ááðòþÍ ÈÜ /1799-1837/
éáöe μ^3 Y³ eë »ÓÍ, ³ nòð³ I³, Çn, ¹ nòð³ Ü³ i áññ.
//þòð³ Y³ á ³ nñNán¹ áðAññóðY¹ /á C² ²nññáðUþ³ I³ Y³ nñCó/

§P³ náoÝ³ ï »Éç |

Библиография

Հարցագրոյց իրան-Հայտան առեւտրական պալատի նախագահ

ՊՐՈ. ԼԵՒՆՈ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ հետ



Լոյս.- Պրմ. Ակարոննեան
նախ թոյլ տուք այս
բացարիկ ընդունելու-
թեան համար շնորհակա-
լութիւն յայտնել: Մենք
ծանօթ ենք սոյն թա-
կանի օգոստոսի 18-ի
ասուլիսի ընթացքում
Ձեր տուած պարզաբա-
նումներին, այդուհան-
դերձ նկատի ունենալով՝
«Իրան- Հայաստան առել-
տրական պայատի» ան-
սակարկելի դերը, որը
կամուրջ է հանդիսացել
երկու բարեկամ երկների
մասնաւրապէս տոնտե-
սական յարաբերութիւն-

Ների զարգացման գործում, ուստի որոշեցինք խնդրել Ձեզ աւելի լայն տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներին:Որպէս առաջին հարց խնդրում են բացատրելք ինչպէս ստեղծեց «Իրամ-Ղայաստան առևտորական պալատը» և որոնք են նրա նպատակները:

L.U.- Խորին շնորհակալութիւն եմ յայտնում այս ասովիս, եւ ձեր հետաքրքրութեան ու ուշադրութեան համար Իրան-Հայաստան առեւտրական պալատի հանդիպ: 1990 թականի մայիսին Հայաստանում տեղի ունեցաւ մի խորհրդաժողով, որը մի բազմաթիւ համահաւաք էր: Իրանից մասնակցեցինք 6 հոգի գործարարներ, որտեղ ես էլ եղայի առիթ ունեցայ:

Ժողովի աւարտից յետոյ բոլորին համար փաստեց, որ քէ Հայաստանը եւ թէ Իրանը միմեանց արտադրանքներից եւ տնտեսական մակարդակից բոլորովին անտեղեանկ են, ինտենսարար որոշեցինք մի տեղեկատական կենտրոն ստեղծել ցանկալի նպատակին հասնելու համար: Այդ նպատակն իրազործելու համար ակտի եւ ծառալուն աշխատանք տարեցինք: 1991 թականին սեպտեմբերին, երբ Հայաստանն իր անկախութիւնն հռչակեց դիմելով Իրանի Առեւտրապարփիւնարերական պալատի դեկավարութեանը, խնդրեցինք Իրան-Հայաստան առեւտրական պալատին արտօնութիւն տրի այդ գործում իր լուճան թերելու համար եւ բարերախտաքար բոլյուտուրինը կարծ ժամանակամիջոցում ստացանք: «Իրան-Հայաստան առեւտրական պալատը» պաշտօնապէս 1992 թ. ապրիլին գրանցւեց եւ դա երկու երկրների պատմութեան մէջ առաջին պաշտօնական համատեղ հաստատուրինն հանդիսացաւ եւ անմիջապէս կեանքի կոչւեց հիմնադիր անդամների կազմը, որտեղ ամէն մի անդամ 400,000 դիարկ մասնակից դարձաւ այդ գործին: Դր. Օննիկ Սահակեանի եւ դր. Ալբերտ Բենարդիի միջոցով կազմւեց պալատի կանոնագիրը, այնուհետեւ դեկավար վարչուրինն ընտրելով՝ աշխատանքն սկսւեց:

Ներկայումս ունենք մոտ 100 պարսիկ եւ հայ արտադրող եւ գործարար անդամներ:

Իրան-Հայաստան առեւտրական պալատը մինչ այժմ երկու երկրների առեւտրական եւ արդինաբերական ոլորտներում կատարող աշխատանքների մէջ իր դրական դերն է ունեցել եւ միջոց է հանդիսացել, որպէսզի տասնեւսկ իրանական գործարարներ եւ արտադրողներ Հայաստանում հաստատվեն եւ առեւտրական կապեր ստեղծեն:

Հայաստանի դեսպանատունը սկզբից, իր բացման օրից առեւտրական տեղեկատուրեան բաժին չի ունեցել, հետեւարար Իրան-Հայաստան առեւտրական պալատը լիի կերպով կատարում է այդ աշխատանքները իրեւ պարտականութիւն և դեսպանատունն այդ պակասը մինչ այժմ չի զգացել: Տարեկան հարիւրատը տեղեկութիւններ է փոխանցում այլազան ոլորտներում և հարցեր են լինում, որ մեր տուած պատաս-իսաններով բաւարարում ենք պահանջող կողմերին: Պիտի շեշտեմ շնորհի մեր կատարած աշխատանքների՝ պետական շրջանակներում Իրան-Հայաստան առեւտրական պալատը մի աշխյօթ է պատասխանատու հաստատութիւն է ճանաչել և նոյնիսկ Իրանի և Հայաստանի միջավանական ժողով-ներում մեր անդամները իրենց մասնակցութիւնն են բերել: Օրինակ՝ Իրանի նախագահի նախկին տեղակալ Պրմ. Հարիրիի Հայաստան այցելելու և այլ նախարարների այցելութիւնների ժամանակ մեր վարչութեան անդամները մասնակից են եղել և իրեւ խորհրդատու բազմից իրադրել են տարրեր պետական հաստատութիւններ:

Պալատը կազմակերպել է 5 ցուցահանդէս իսկ 6-րդը պիտի մօս ապագայում տեղի ունենայ, որը շինանիւթերի եւ քաղաքաշինութեան արտադրութիւնների ցուցահանդէս է լինելու։ Պալատը տարեկան ցուցահանդէսների կազմակերպելու համար գնահատանքներ է ստացել Իրանի տարբեր նախարարութիւններից՝ Հայաստանի առեւտրական եւ արտադրութեան նախարարութիւնից, գործարաբների եւ արտադրութիւնների միութիւնից, եւ այլն։ Դրանք մենք համարում ենք խիստ արժեքաւոր։

Լոյս.- Անշուշտ Ձեր աշխատանքների իրագործման մէջ հանդիպել էք որոշ խոչընդոտների: Ի՞նչպէս էք վարւել Ձեր ուժ ծարագած ոժապութիւնների նկատմամբ:

L.U.- Իմ կարծիքով աշխարհուն որեւէ լուր աշխատանք առանց դժւարութիւնների չի կատարում, ուստի պէտք է խոստվանել, որ մենք էլ այդ երտոյթից զերծ չենք եղել, բայց շնորհի մեր խորիոյի անդամների եւ աշխատակազմի եւ ամենազիանարը մեր անդամների օգնութեանը, որ հաւատը ունեն մեր կատարած աշխատանքներին կարողացել ենք յարքահարել տեղի ունեցած դժւարութիւնները եւ շարունակել մեր աշխատանքը եւ առաքելութիւնը: Չպիտի մոռանալ, որ մեր անդամներն պարսկիներ եւ հայեր են, որոնք սիրում են եւ իրանը եւ Հայաստանը: Մեր նախատակն ու ուղին նոյնն է, պիտի յայտնեմ, որ կատարած աշխատանքները լաւագոյն արդիւնքների են հանգել:

Լոյս.-Ի՞նչ մօտեցում ումեն իրանցի գործադարները Յայաւանի հետ յարաբերութիւն ստեղծելու կապակցութեամբ:

ԼԱՀԱՅԱՏՈՒՆԻ բաւականին նպաստաւոր ներդրումային օրենքների տէր է և դա առիթ է դասնում հրանի

Յարցաւորոյն

արտադրողների եւ գործարարների համար, որ տարբեր ոլորտներում ներդրումներ կատարեն: Պիտի ասել, որ ըստ մեր տեղեկութեան, իրանցի գործարարների համար Հայաստանն քացառում է և. Սիութեան միջին Ասիական այլ երկրներից եւ դրա հիմնական պատճառը հայ ժողովրդի պատարեր անցեալը, հարուստ մշակոյթը, ազնութիւնը եւ ճկունութիւնն է առեւտրական ասպարեզներում: Ես հանգուած եմ, որ այդ ներդրումներն ապագայում մեծ նախումներ կարձանագրեն:

Լոյ.-Մօտ ապագայում Հայաստանում պիտի տեղի ունենայ հրան-Հայաստան 8-րդ ցուցահանդէսը: Ի՞նչ ակնկալիքներ ու սպասում այդ ցուցահանդէսից առանձապահ:

Լ.Ա.-Ընդհանուր առանձ տարբեր երկրներում ցուցահաննես կազմակերպելն ինքնանպատակ չէ: Այդ կարգի աշխատանքներով մի երկիր միավիճ ներկայացնում է իր արտադրութիւնը, ժողովրդին և գործարարներին ծանօթացնում է տարբեր տեսակի արտադրութիւնների և ծանօթութիւն է աստեղում երկու երկրների արտադրութիւնների և գործարար մարդկանց մեջ իրենց ապագայ աշխատանքների համար: Իրանը սկսած 1995 թականից Հայաստանում կազմակերպել է 7 ցուցահաննես, որից վերջին ինքնոր կազմակերպել է Իրան-Հայաստան առեւտրական պալատը, և այս տարի կրկին տեղի կունենայ ուժերորդ ցուցահանն-դէսը, որը պալատի ձեռնարկն է լինելու: Այս անգամ շինանիւթերի եւ քաղաքաշինութեան արտադրանքների մասնագիտական ցուցահաննես է լինելու եւ ցուցարկելու է ճարտարագիտութեան առնչող զանազան շինանիւթեր: Վատահարար երկու երկրների շինարարութեան բնագաւառում նոր ծանօթութիւններ եւ համագործակցութիւններ տեղի կունենան: Նկատի առնելով, որ ներկայում Հայաստանում, մասնաւանդ Երեւանում մեծ բով շինարարութիւն է տեղի ունենում, ներազում ենք մի յաջող ցուցահաննես պիտի ունենանք:

Լոյ.-Ինչպէս էք գնահատում Հայաստանի ներկայ տնտեսական իրավիճակը:

Լ.Ա.-Հայաստանի տնտեսութիւնը պիտի բաժանել երկու մասի՝ պետական և մասնաւոր, որոնցից մասնաւոր բաժինը բաւականին աշխոյժ կերպով աշխատում է եւ կարողացել է արտասահմանից ներդրող գողովներներ ներգրատել և դա նկատում է տարբեր ոլորտներում շինարարական, հանքային, գիլտանտեսական և տար-թեր տեսակ արտադրական բնագաւառներում: Պետական բաժինը աւելի ծանրաբենած է զինուժի և պետական տարբեր ծախսերի հոգերով: Այդ պատճառով էլ պետական ներդրումները սահմանափակ են եւ նոյնիսկ աշխատում են հնարաւորին շափով ճեղքագատել պետական հաստատութիւններից, որոնց սեփականաշրմարիումը կարելի է իրականացնել: Քայլ Հայաստանի պետական կազմը, որ առաջնորդում է երկրի տնտեսութիւնը, այս վերջին տարիներում անկախութիւնից յետոյ տարբեր կարենու ոլորտներում որեւէ դրական աշխատանք չի կատարել, եւ նոյնիսկ համեստի համզմանք կարելի է ասել մոռացութեան է մատնել դրանց, որոնց թում են բանկային զարգացումը, փոխադրութեան, մարսային ապահովագրութեան, գրասաշրջիկութեան, գիւղատնտեսութեան, առեւտրական բաժինների ենու կապաւած հարցերը: Ինչպէս կարելի է այդ խնդիրների կապակցութեամբ հարցերն մեկ առ մեկ քննարկել, բայց դա այս ասուլիսի սահմաններում հնարաւոր չէ: Այս բոլորով հանդերձ Հայաստանի տնտեսական վիճակն համեմատելով այդ շրջանի նոր անկախութիւն ստացած երկրների հետ շատ աւելի բարձր մակարդակի վրայ է գտնուում:

Լոյ.-Դուք ներկայ եղաք վերջերս Հայաստանում տեղի ունեցած Հայաստան-Սփիտը երկրորդ խորհրդաժողովին, ինչպէս են Զեր տպաւորութիւններ այդ մասին:

Լ.Ա.-2002 թականի մայիսին Հայաստան-Սփիտը խորհրդաժողովը շատ լաւ կազմակերպած համահաւաք էր: Եւ դրանով հանդերձ, որ այս անգամ համեմատարար աւելի շատ լաւ կազմակերպելու: Մանաւանդ նկատելի էր երիտասարդների մասնակցութիւնը: Քննարկեց տնտեսական, մշակութային, կրթական, առեւտրական, գրասաշրջիկային, եւ այլ ոլորտներում մասնակցողներին հետարքը արդյունաբերութիւնը: Վերջում շատ արդիւնաւետքանած եղանակից, եւ հիմա հարցը այն է, թէ ե՞րբ եւ ովքե՞ր են աշխատելու այդ առաջարկների եւ բանածելի իրագործման համար: Սա դեռևս անյատ է յոյսով եմ, որ մոռացութեան շմատնի:

Լոյ.- Ինչպէս գիտենք Զեր անձնական նիւթական օժանդակութեան շնորհի Հայաստանում վերակառուցւեց աւերակի ենթարկուած մի մեծ դպրոց: Այդ բնագաւառում ի՞նչ նոր ծրագրներ ունենք:

Լ.Ա.-1999 թականի նոյեմբերի 27-ին Զեյրուն Քանարեն քաղաքանախան 136-րդ դպրոցը հրդեհի մատնեց եւ 1000 աշակերտան ընդգրկող դպրոցը մի քանի ժամում ամբողջութեամբ այրվեց: Ես եւ կինս նոյեմբերի 28-ին Երեւանի հեռուտատեսութեան երերից տեղեկացանք այդ դէպքի մասին: Դեկտեմբերին միասին ճամփորդեցինք Երեւան եւ մօտկից այցելեցինք աւերած դպրոցը: Ուստի տեղի վրայ կնջու հետ որոշեցինք դպրոցի նորոգումը յանձնել: Երեւանի քաղաքապետի հետ պայմանաւորելուց յետոյ, 18 ամսայ անդադար աշխատանքի շնորի 2001 թականի սեպտեմբերի 3-ին պաշտօնապէս դպրոցը Երեւանի քաղաքապետի պըն. Նազարեանի ճեռամբ վերաբացւեց: Սոյն դպրոցում դասաւանդում են պարսկերն ենթամուլտ դասեր: Այդ դպրոցի վերաբացումից յետոյ առաջին դասարանում 130 աշակերտ պարսկերն էին սովորում, իսկ այս տարի այդ աշակերտների քանակը կրկնապատիկ կը լինի: Տարեկան քանի անգամ տարբեր առիջով այցելում են այդ դպրոցը, եւ դա ինձ եւ կնջու հոգեկան մեծ բաւարարում է պատճառում: Այդ դպրոցը Երեւանի քաղաքապետի կարծիքով իր յարմարութիւններով եւ շենքով Երեւանում լաւագյուն է:

Այս օրերին Երեւանի բնապահտպանութեան քանօպարանի նորոգման հարցով են զբաղած, որը կարող է 5-ից 6 ամիս տեսել: Սոյն քանօպարանը շատ լաւ հաւաքած ունենաւոր է այդ դպրոցը, եւ դա ինձ եւ կնջու հոգեկան մեծ բաւարարում է պատճառում: Այդ դպրոցը Երեւանի քաղաքապետի կարծիքով իր յարմարութիւններով եւ շենքով Երեւանում լաւագյուն է:

Լոյ.- Կերջում եք կան այլ լուսաբանութիւններ կը խնդրենք ներկայացնեք:

Լ.Ա.-Ցանկանում են մի լուր յայտնել: Հաւանարար մօս ապագայում մի կառավարական հաստատութեան եւ Իրան-Հայաստան առեւտրական պալատի համագործակցութեանը Հայաստանում ներդրումներ կատարելու նպատակով մի մայր ընկերութիւն կը կազմի, որից յետոյ բաժնետոմսեր կը վաճառեն: Այդ աշխատանքը ինչպէս կը հողմից: Այդ որոշումը եք հաստատի ազգային իշխանութեան կողմից: Այդ որոշումը կը համար կարծիքով իր կարծիքով կատարելու իշխանութեան համար:

Հարցարույց վարեց Վաշիկ Կարդանեանը

Մակույց

Համառոտ ակնարկ իրանահայ գաղթօջախների պատմության

Եղ. Բաղդասարյան-Գերմանիկ
Տար. Ամասորդ համարից

Ելրոպացի ճանապարհորդ Շարդենը, բռնագաղթից 40 տարի հետո Մազանդարանում գտնված ժամանակ, ցավով նշում է, որ այդտեղ բերված 30.000 ընտանիքներից մնացել են միայն 400-ը, մնացածները մահացել են կլիմայի վատառողջ լինելու պատճառով։ Տվյալներ կան, որ տարեգրված հայության թիվը հասել է մինչեւ 500.000։

Չափ Արքասը Սպահանի արվարձանում, Զայանդերուղի մյուս ափին, հայերին թույլ է տալիս իհմնել բնակավայր որի բնակիչները իհմնականում Նախշեւանի եւ Երեւանի գավառներից ու Զուղա գյուղաքաղաքից բռնագաղթվածներն էին։ Վերջիններս, իրենց իհմն բնակավայրերի անունը պահպանած լինելու համար, նոր տեղում անվանեցին Նոր Զուղա։ Չափ զգալի արտօնություններ է շնորհում հայ առեւտրականներին եւ արհեստավորներին։ Նա նույնիսկ թույլ է տալիս այդտեղ հայկական Եկեղեցիներ կառուցել, ունենալ դատարաններ։ Նրա հրամանով Էջմիածնի վանքի քարերը բերվում են Նոր Զուղայում կառուցվող Եկեղեցիների պատերը ծեւավորելու համար, որը կատարվում է հայ գաղթականությունը պարսկական հոդի հետ կապելու նպատակով։ Կարճ ժամանակում Նոր Զուղան դարձավ Իրանի առեւտրական կարեւոր կենտրոններից մեկը, որի հայ վաճառականները (Խոջաները) 17-րդ դ. եւ 18-րդ դ. առաջին քառորդում դարձան Յնդկաստանի, Ելրոպական ու Ռուսաստանի հետ Իրանի առեւտրա-տնտեսական կապերի զարգացման ակտիվ գործիչներ։

17-րդ դարում եւ 18-րդ դ. սկզբին Նոր Զուղան դարձավ Իրանի հարավում ապրող հայերի թեմական կենտրոն, ինչպես նաև մշակութային կարեւոր օջախ անմբողջ գաղութի համար։

18-րդ դ. 20-ական թվականներին աֆղանների արշավանքի հետեւանիքով Նոր Զուղայի կյանքը ապրեց խոր անկում։ Դրան հաջորդած Ֆեռդալական Երկարակությունների եւ պատերազմների շրջանում նրա բնակչության զգալի մասը, հատկապես ապահոված, հարուստ խավը հեռացավ, առավելապես Յնդկաստան, Իրաք եւ արաբական այլ երկրներ, ինչպես եւ Ռուսաստան։ Այսուհանդերձ, Իրանում ապրող հայերի գերակշիռ մասը մնաց Երկրում։ Նրանք բնակություն հաստատեցին Իրանի այլ նահանգներում եւ շրջաններում։

Անգլիացի միսիոներ՝ Յանրի Մարթինի վկայությամբ (22 մայիս 1711 թ.) հայկական գաղութ է գոյություն ունեցել Պարսից Ծոցի ափերում գտնված Բուշերում, ինքը այդ թվականին հյուր է լինում մի հայ ընտանիքի։ 1711 թ. հայերը Բուշերում ունեցել են Եկեղեցի եւ քահանա։ Նոր Զուղայի վաճառականները երբ սկսեցին Յնդկաստանի հետ իրենց առեւտրական հարաբերությունները, օգտվեցին Բանդար Արքասից, սակայն 1763 թ., երբ անգլիացիները հեռացան այդ

նավահանգատից, հայ առեւտրականներն է հետեւելով նրենց Բուշերի հաստատվեցին։

Այդ տարիներին տեղաշարժեր եղան նաև հայ գյուղական բնակչության մեջ։ Նոր Զուղայի հարակից Լճան եւ Ալիջան շրջաններում ապրող բոլոր հայ գյուղացիները տեղափոխվեցին դեպի արեւմուտք ու հարավ-արեւմուտք՝ Փերիայի, Բուրվարի եւ Զիարմահայի շրջանները։ Յաջորդ տասնամյակում հայ գյուղացիների շատ ընտանիքներ Բուրվարի եւ Գյափլա շրջաններից անցան հարեւան Քյամարա եւ Քյազա շրջանները։ Այս տեղաշարժերի ընթացքում ստեղծվում էին հայկական նոր բնակավայրեր եւ կամ համարվում էր արդեն եղածների բնակչությունը։

Իրանի հայ բնակչությունը ծանր վիճակում է գտնվել 18-րդ դարի երկրորդ կեսին, միջնեոդալական ընդհարումների ակտիվացման ժամանակաշրջանում, երբ 1747 թվականին սպանվեց Նադիր Չահը։

18-րդ դարի երկրորդ կեսում Իրանում իշխում էր սուլք՝ հարթահարող խաններից, մահը՝ ավագակային հարձակումներից, տուգանքը՝ ինքնազլուխ իշխաններից եւ տանջանքը՝ հարկապահանջներից։ 1753 թվականին Սպահանի եւ Նոր Զուղայի վիա դրված է եղել 60.000 բռնան արտակար հարկ։ Չատ չանցած երբ Սպահանին կարծ ժամանակով տիրել են աֆղանները, նոր ջուղայեցիներից պահանջվել է եւ 1800 թուման։

18-րդ դարում Իրանի հայ բնակչության անտերունչ վիճակից փորձեցին օգտվել կարուիկ միսիոներները, որոնք հաստատվել էին Իրանում դեռեւ Չափ Արքայի օրոք։ Իրանում հաստատվել էին միսիոներական մի քանի միաբանություն՝ Օգոստինյան, որը գտնվում էր սկզբում պորտուգալական, իսկ հետո խապանական թագավորի հովանավորության ներքո, Կապուչինյան եւ Յիսուսյան, որոնք գտնվում էին Ֆրանսիական թագավորի հովանավորության ներքո, Կարմելյան, որը գտնվում էր պապի հովանավորության ներքո եւ այլն։ Իրանահայությունից կաթոլիկություն են ընդունել այն հայերը, որոնք կապված էին կաթոլիկ աշխարհի հետ։ Այսուհանդերձ միսիոներական կազմակերպությունը մեծ հաջողություններ չի ունեցել։

19-րդ դ. 20-30-ական թվականներին իրանահայ գաղութը ենթակվեց նոր փոփոխությունների։ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով՝ Արեւելյան Յայաստանի մի նասը Ռուսաստանին միանալուց հետո, նոտ 45 հազար հայեր դուրս եկան Իրանի հյուսիսային նահանգներից եւ բնակություն հաստատեցին Երեւան եւ Նախշեւանի նահանգներում։ Իրանում մնացած հայերը գլխվորապես բնակվում էին հարավային Եյսուսիսային նահանգներում։ Յա-րավարնակ հայերի կենտրոնը շարունակում էր մնալ Նոյր Զուղան։ Նրան էին ենթակվում Փերիա, Քյարվան, Զիարմահայ, Բուրվարի, Յամադան, Շիրազ քաղաքների հայաբնակ օջախները։

1833 թ.-ից հյուսիսային նահանգներում բնակվող հայերի կենտրոնը դառնում է Թավրիզը։ Մինչ այդ Մակուի շրջանում գտնվող Թավրիզի վաճքին էր պատկանում առաջնային դերը։ Այսուհետեւ Թավրիզը համարվում էր Խոյի, Մակուի, Սալմաստի, Ուրմիայի, Ղարաբաղի, Սարաղայի եւ այլ շրջանների հայերի կենտրոն։

Տար. 3

Օթաւայի Աշուղ

Նիկողոս Թաշճեան

Նիկողոս Թաշճեանը Օթթաւայի յայտնի ազգային դէմքերից է: Ծնվել է 1931 թ. Յունարի 6-ին Ուրժայուն, ուր Սեծ Եղեռնից յետոյ նրա ընտանիքը կարողացել էր գոյատևել իր հօր ճարտարապետական նասնագիտութեան շնորհիւ, որը շատ պիտանի էր Թուրքիային: Սակայն հօր մահից յետոյ պարտադրաբար ընտանիքով (մայրը, 3 եղբայր, մէկ քոյր) փոխարիւուն են Հալէա, Սուրիա, մեծ մօր մօտ: 1969 թւականի Ապրիլից հաստատւել է Կանադա:

Նա ունի քնարական ինքնաբուլս ընդունակութիւն և խառնածք, որը քոյլ կտայ իրեն մեր հին աշուղների նման, երբեմն տեղւոյն վրայ քերթածներ ստեղծագործելու:

Նրա քերթածները տպագրւել, երգւել և երեսն նաև պարի են Վերածնել (Լորք Լորք) և տարածում ու ջերմ ընդելութիւն գտել թէ կանադահայ զաղութում թէ Ամերիկայում, Լիբանանում Ֆրանսիայում ևն: Ելոյթներ է ունեցել հայկական հեռուստատեսային ծրագրերում, հայ համայնքային միւրիւններում, ծերնակներում և այլուր: Նրա քնարը հայրենատենչ և հայրենաշունչ է զգացական և ժողովրդական-աշուղական, որի համար էլ Օթթաւայի Աշուղ մականունն է ընտրել: Ստորև ներկայացնում է նրա քերթածներից մի քանիսը:

Մեսրոպեան տառեր

Մեսրոպեան տառեր
Ուկէ դարեան ոսկէ գանձեր,
Առանց հայոց ոսկէ տառեր,
Հայ մշակոյք գոյութիւն չուներ:

Առանց թատրոնի
Առանց ասմունքի
Մեր մշակոյքը,
Ինչ արժէր ուներ ...

Մեսրոպ ստեղծեց
Այս ոսկեայ տառեր,
Որ յաւերժ ապրին
Գալիք սերունդներ:

Ահա մենք հպարտ,
Ուրի ենք կանգներ,
Մեսրոպեան ջահը,
Զեռքներիս բռներ:

Ունինք հայրենիք,
Ունինք մշակոյք,
Եւ պապեանական,
Սուրբ հաւատքը մեր:

Յառաջ պիտ քալենք,
Յառաջ դէպի վեր,
Մինչ մենք հասնենք
Վանայ լիճը մեր ... :



Ողբ Շիրազի

Քո գրիչն հոսող հոգին

Նոր սերունդին ուղին դարձաւ

Օտարութեան մէջ կորաւոյ

Հայ պանդուխտին ճամփայ դարձաւ:

Մոխիք դարձած մեր հողերուն

Ծաղկ տուղ բոյսը դարձաւ,

Սուր մնացած հայ խրճիթին

Կայծակ տուղ լոյսը դարձաւ:

Հայ մամիկին ցաւը երգող

Մեր հին սազի լարը դարձաւ,

Հայաստանն ու հայ սփիւռքը

Իրար կապող կամուրջ դարձաւ:

Մափսներու ցաւը սրտիդ

Մո աչերին արցունք դարձաւ,

Մեր անջատած քանկ հողերուն

Ցաւը երգող աշուղ դարձաւ:

Թշնամիին սրտին մխւող

Հայ քաշերու հուրը դարձաւ,

Ծիծերնակարերի կորողով

Հայերժական ջահը դարձաւ:

Հայոց Տուֆը

Զօն՝ Յաւերժական Հայաստան յուշակոթողի կառուցմանը,
ՀՀ դեսպանատուն, Օթթաւա, Կանադա

Տուֆը տաշես

Չարդ կը դառնայ

Մեր պատմութեան

Փաստ կը դառնայ

Սասունցի Դաւիթ,

Աղիւծ Սիեր,

Հայ սերունդը

Կերտող մայրեր,

Նոյ Նահապետ

Մեր արմատներ,

Մեր պապերի,

Ծինած վանքեր,

Սրբատեղի ու խաչքարեր,

Յաւերժութեան

Զահ է դառներ:

9 Մեպտեմբերի, 2002 թ.

Մակոնք

Արմենիա

Արարատի լայն փեշերէն

Հատերը եկեր ու անցեր.

Հատ մը փառքեր, շատ մը ջարդեր

Հատ մը կարաւաններ են անցեր.

Արմեններու այս երկիրը

Հիմա Արմենիա է դարձեր:

Երգ Սեւանի

Ախ Սևան, Սևան

Իմ սրտի խորան

Հայոց աշխարհի

Կանթեղն ես վառման:

Հատ հողմեր փշեցին,

Հատ չարքեր անցան,

Բաց քո կանքեղմեր

Միշտ կը պլալան:

Սևեր կապեցիր,

Սևեր հագար,

Վանայ քրոջմէդ

Երբ բաժնւեցար:

Միրտըդ չի խոցի

Ալ մի վշտանար

Չի կայծակի նման

Հայ քաջեր կան:

Լուսաւորչի լոյսով,

Վարդանի սուրով,

Պիտ քալենք դէալի

Կարս, Արտահան, Վան:

Կանթեղը վառելու

Աղբամարի վրայ,

Որ ջահը դառնայ

Մեր ազատութեան:

Լօրք Լօրք

Լօրք լօրք աղտոր պար է

Եկեք պարենք լօրք

Նշանտուքին, հարսանիքին

Սենք կը պարենք լօրք:

Լօր լօրք լօրք լօրք

Յատկենք պարենք լօրք

Տատու զարնէ, զուրնան փշէ

Եկեք պարենք լօրք

Աղջիկ-տուայ ոսքի հանէ

Եկեք պարենք լօրք:

Լօր լօրք լօրք լօրք

Յատկենք պարենք լօրք

Գիտ գացին ու հարս արին

Եկեք պարենք լօրք

Հայր-մայրը նստան լացին

Եկեք պարենք լօրք:

Լօր լօրք լօրք լօրք
Յատկենք պարենք լօրք

Հարսը ելաւ ձիուն նստաւ

Եկեք պարենք լօրք

Ամրող զիտղ ոսքի ելաւ

Եկեք պարենք լօրք:

Լօր լօրք լօրք լօրք
Յատկենք պարենք լօրք

Գիտին աղան միջնորդ եղաւ

Եկեք պարենք լօրք

Այդ կէնճերուն ոչխար տւաւ

Եկեք պարենք լօրք:

Լօր լօրք լօրք լօրք
Յատկենք պարենք լօրք

Զգացումը իմ սրտին

Ես չեմ գովէր արև ու լուսին

Ես չեմ գովէր բնութիւնը աշխարհին

Այլ ես կողբամ իմ հայ ազգի

Տեսակաւոր ցաւերին:

Ես չեմ գովէր լիճ, գետ ու առակ

Ես չեմ գովէր ջրերին,

Այլ ես կողբամ իմ հայ ազգին

Անհետացող զանձերին:

Ես չեմ գովէր ծաղիկ ու վարդ

Ես չեմ գովէր բուսերին

Այլ կողբամ հայեն ծնած

Օտար ապրող անձերին:

Ահա այս է իմ գրութիւնը

Զգացումը իմ սրտին

Ես կը գովեմ հայ լեզուով

Հայր կերտող հայերին:

Այրւող սիրտս

Ինչպէս կրնամ ես խնդալ

Երբ իմ սիրտն է վիրաւոր

Գետին ընկած ուժասալաւ

Հարազատի հարւածով:

Ինչպէս կրնամ ես խնդալ

Այս փշրւած իմ սրտով

Չունիմ մէկը ինձի մօտ

Սփոփի սիրտը՝ վիրաւոր:

Ինչպէս կրնամ ես խնդալ

Երբ ես անկեղծ իմ սրտով

Տի ինչ որ ես ունիմ

Մանուկի մը հաւատքով:

Ինչպէս կրնամ ես խնդալ

Այս իմ խորունկ վերքերով

Ըսէք մահը թռդ շուտ գայ

Ջը տառապիմ ամէն օր:

Նրա Վարպետութիւնը փաստ է

Այս մտերմիկ գրոյցից առաջ, մտաբերում էի գրուցակցիս հասցեին արտայայտած տեսակետները: Ուզում էի մի յարմար ածական գտնել դրանց միջից, որ յանկարծ յիշեցի «Վարպետ» բառը:

«Բաֆֆի» մարզահամայիրի կազմակերպման հենց սկզբնական օրերից անխոնջ եւ ջանասէր անդամի մասին ասում էին.

- Նա իր գործում վարպետ է:

- Նրա վարպետութիւնը փաստ է:

- Տեսնենք վարպետն ի՞նչ կասի:

Այս, իրօք բեմայարդարութեան որեւէ աշխատանք առանց նրա հայեցողութեան եւ կտրուկ միջամտութեանը շնասաւ իր արժանի աւարտին: Այսպէս է աշխատել վարպետը յատկապէս «Սանահին» միութիւնում և «Բաֆֆի» մարզահամայիրում, երկար ու ծիգ տարիներ:

Սի կարճ ու մտերմիկ գրոյցի նատելու նպատակով մօտենում ենք նրան:

- Ներկայացրէք Ձեզ:

- Սիրով: Հայկ Խաջաւեանն եմ, ծննել եմ 1952 թականին:

- Ձեզ ճանաչողները գիտեն, որ Դուք հմուտ բեմայարդար եք, եւ յատուկ սէր եք տածում դէպի բեմարտեսար: Կը ցանկանայինք Ձեր լեզուից լսել, թէ ո՞ր թականից եւ ինչալ՝ սարքանցաւ եւ աճեց այդ սկըր:


- Նախ իմ մէջ ծնունդ առաւ եւ զարգացաւ ձիրքը նկարչութեան հանդէպ, եւ համարեա 10 տերականում զգացի այդ, երք արդէն գործերս քաջալերանքի եր արժանանում, իմ սիրելի ուսուցչուուս՝ օր Լալիկ Թաշճեանի կողմից: Դա այս պահերին եր լինում, երք նկարչութեան կողքին զրադաւ էի մի շարք մանր արինստներով: Այդ օրինակներից կարող եմ յիշել մի օրինակ: Երբ լուցկու փայտիկներով մանր չափերի վրայ կառուցեցի «Էֆեկտ» աշտարակի մակետը, ուսուցչուուս կողմից արժանացայ իրայատու զմահատանքի:

- Համոզած ենք, որ Դուք աւելին եք արել: Թողեք համեստութիւնը եւ պատմէք Ձեր վաստակի մասին:

- Տարիներ է անցել այս օրից: 5-րդ դասարանում մի մզկիր նկարեցի, որը միջազգային մրցոյքում, որ տեղի եր ունենում Ինդունեգեանում յատուկ մրցանակ շահեց, եւ ԻՒՆԻՍԵՖ-ի (UNICEF) միջոցով այդ նկարից մեծ տպաքանակով բացիկներ եւ տօնական քարտեր պատրաստեց: Կարծես տարիքն իր կնիքն է թողել: Անցեալից շատ քան չեմ յիշում:

Նա շարունակելու համար այրպէս է տրամա-քանում, սակայն ես գիտեմ, որ նա խուսափում է եսասիրութիւնից ու ինքնախառարանումից:

- Այս օրերին ի՞նչ եք անում:



Ընդհանրապէս «Բաֆֆի» մարզահամայիրում գրեթէ բոլոր միջոցառումների բեմայարդարման աշխատանքները յանձնարարում է համեստիս, եւ ես ել իմ կարելին եմ փորձում յանձնարարած պարտականութիւնները հնարաւորին սահմաններում պատաւոր կատարել: Որպէս օրինակ կարող եմ յիշեցնել, որ վերջերս Իրան էր ժամանել Հայաստանի հանրայայտ երգչուի Սուլամա Մարզարեանը եւ նրա դուստրը Սիրուչօն: Նրանց ելոյթի բեմական աշխատանքը յանձնարարած էր ինձ, որն ըստ երեսոյ-թին արժանացել էր ժողովրդի եւ մասնաւորապէս յիշեալ արևստագէտների գնահատանքին:

- Իսկ Ձեր այլ աշխատանքների մասին պատմէք:

- Վերջին չորս տարուայ ամանորեան հանդէսների համար պատրաստել եմ համապատասխան խորհրդանշիչեր եւ պատտառներ՝ զարդարելով դակիճը: Կարծում եմ դրանց զիսաւորը 2000թ. Նոր Տարայ հանդէսին իմ պատրաստած 12 մետրանց եղենին էր՝ 12 մետր տրամագծով, որն արժանացաւ մասնագէտների բարձր գնահատանքին: Իմ մի այլ աշխատանքներից էր ցեղասպանութեան զոհերի յիշատակին Ծիծեռնակարերի վեհակորողը յիշեցնող մի համեստ օրինակի պատրաստում, որը 24 ապրիլի օրը «Բաֆֆի» մարզահամայիրի դակիճի կենտրոնում կանգնեցրեց որպէս խորհրդանշից, որի չորս կողմը մեր ժողովուրդը քարմ ծաղիկներով զարդարեց:

- Արդեօք մօտ ապագայում որեւէ ծրագիր ունէ՞ք:

- «Բաֆֆի» մարզահամայիրի վարչութիւնը նախապատրաստում է համայիրը օժտել մի էլեկտրաշարժ ժամացոյցով: Այստեղ ել հաշիք է առնում իմ տեսակետները դրա տեղադրման եւ շինարարական աշխատանքներին կապւած:

- Ի՞նչ նորութիւններ է սպասում «Բաֆֆի» մարզահամայիրին:

- Իմ սիրելի «Բաֆֆի» մարզահամայիրը վերջապէս կունանայ կանաչազարդ դաշտ, իհարկէ արհեստական եղանակով: Այստեղ եւս համայիրի հոգատար մրամինների խորհրդով մասնակից եմ այս բնագատան ճարտարագիտական ու շինարարական աշխա-

Արական

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՃԱՔԱՐԱԽՏԸ ԿԱՆԱՑ ՍՕՏ

Harvard Women's Health Watch
ամսագիր, 2001թ., Յուլի
Թարգմանեց
Լեռն Մհարոնեանը

տաճքների իրազործմամբ: Այստեղ յանձնարարած է նաև մեզ յաղթահարել ծագած մասնագիտական դժվարութիւնները:

- Լսել ենք հարսանեկան եւ նշանդեքի համար զարդեր էք պատրաստում:

- Այս: Անցեալում սահմանափակ թուվ, եւ մտերիմների համար անում էի դա, սակայն այժմ կեանքի պայմանները թոյլ չեն տալիս:

- Ի՞նչ կասէք, եթէ պնդեմ ինձ համար զարդեր պատրաստէք, - Ժպուում եւ պատասխանում է:

- Եթէ դուք յանուն այդ զարդերի ուզում էք կրկին ամուսնամալ, ինձ մնում է տալ դրական պատասխան:

- Պատմէք Ձեր ընտանիքի մասին:

- Անուսինս՝ Սեղան իրօք եղել է իմ կեանքի իրական ընկերը: Ունենք մի արու զաւակ, որին անաւանել ենք «Ժայռ»: Ժայռն էլ է նկարում, եւ 1977-ին, երբ մանկապարտէզ էր հաճախում, իր նկարը Շապոնիայում արժանացաւ 2-րդ կարգի շքանշանի: Այդ նկարը առաքել էր Հ. Հ. Ընդութիւնը:

- Ուրեմն ինչպէս ասում են, խնձորը ծառից հեռու չի ընկնում:

- Տայ Աստած: Փափազ այն է, որ նրան քարձունքների վրայ տեսնեմ:

- Ի՞նչ կասէք վերջում:

- Շնորհակալութիւն եմ յայտնում «Լոյս» երկարաբերին, իր կատարած շնորհալի աշխատանքի համար: Թող որ աշխարհին բարիք բերէք եւ մեր ազգին վերելք:

Թղթակից

Ճանաչենք մեր լաւագոյն աշակերտ-ուիհիներին

Ստորեւ մեծ հաճոյքով ներկայացնում ենք «Մարիամ» կրթական հաստատութեան գերազանցիկ աշակերտ-ուիհիներին, ընդառաջելով սոյն դպրոցի ուսուցչական կազմի խնդրանքին, ցանկանալով նրանց նախանձելի վերելք:

1. **Արգինէ Շամիրեան-Ա տարրական**
2. **Փրէնի Ազարեան - Ա տարրական**
3. **Ամասիս Յակոբեան - Բ տարրական**
4. **Մինէ Թալամի - Բ տարրական**
5. **Բիւրակ Զարգարեան - Բ տարրական**
6. **Էլին Յակոբեան - Գ տարրական**
7. **Մինտիս Թէյմուրեան - Գ տարրական**
8. **Արէն Բաղալեան - Ե տարրական**
9. **Էղիկ Յակոբեան - Ա ուղեցոյց**
10. **Էղւին Խսաղուլեան - Ա ուղեցոյց**
11. **Արժուր Վարդան-Ղամուսեան - Բ ուղեցոյց**

Սկիզբ ճախորդ համարից

ԽԱՌՆ ԲՈՒԺՈՒՄ

Աւանդաբար, բժիշկները երկրորդ կարգի շաքարախտի բուժնան համար դիմում են միայն մեկ մետոդի: Երբ ձախողութ էր այդ մետոդը այս փոխարինում էր մի երկրորդ մետոդով: Սակայն արեան շաքարը վերակըսկելու այս մօտեցումը յաջողութիւն էր գտնում բոլոր պարագաների մօտաւրապէս չորսից մեկ դէպքում: Այժմ բժիշկները առաել յաջողակ բուժումներ են կատարում մեկից աւելի դեղամիջոց-ների միատեղ օգտագործմանք: Այս, ընդհանուր առմամբ, նշանակում է առանձին դեղերի աւելի փոքր դոզա, ուստի աւելի սակաւ անցանկայի կողմնակի հակագրեցութիւններ:

Բերնով ընդունող դեղամիջոցների մեջ ամենից շատ տարածում գտածը մետֆորմին (metformin), սոլֆոնիլիրիա (sulfonylurea) դեղային խառնուրդն է, սակայն փորձարկութ են այլ կոմբինացիաներ եւս: Tulane համալսարանի հետազոտողներ գեկուցում են, որ արեան շաքարի վերահսկման ինսուլինի զգայնութեան եւ պանկրետի բջջների աշխատանքի վրայ առաել բարերար ազդեցութիւն ունի մետֆորմին / ոռզիզիտազոն կոմբինացիան քան մետֆորմինը միայնանկ: Նոյնիսկ, եթք անհրաժեշտ է ինում ինսուլինի սրսկումը, նաեւ բերնով ընդունող մի դեղամիջոցի գործածութիւնը կարող է կրծատել ինսուլինի ծաւալը:

Սի խումբ շաքարախտի մասնագէտներ առաջադրում են դեղամիջոցներով բուժումը ձեռնարկի հենց սկզբից, առանց սպասելու տեսնել, թէ ինչպիսի ազդեցութիւն է ունենում միայն կենցաղի փոփոխութիւնը արեան շաքարի աստիճանը վերահսկելու ընթացքի վրայ:

ՃԱՔԱՐԱԽՏԸ ԿԱՆԱՑ ՈՒՏԱԿՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կանանց սրտանօթային հիւանդութիւնը կանխարգիկելու միտումն յանձնարարութ են ստորեւ նշած նշանակետները՝

- Անօրի արեան գլուկոզ=80-120 mg/dl*
- Անկողին մտնելու արեան գլուկոզ=100-140mg/dl
- Hb A1c (արտացոլում է անօրի եւ ուսելուց յետոյ արեան գլուկոզի աստիճանները նախորդ 2-3 ամսայ ընթացքում <7% (եօթ սուլուսից պակաս)
- LDL < 100 mg/dl
- HDL>60 mg/dl (հաւասար կամ աւելի քան) Թրիգլիցիրայդմեր <150 mg/dl (150 mg-ից պակաս)

* mg/dl=100 սիսի-ի մեջ միլիգրամ